Գենդերային ապատեղեկատվության հետևանքները կին բնապահպանների հանրային գործունեության վրա. հետազոտության արդյունքներ

Հետազոտող՝ Նարինե Եգանյան

Սույն հետազոտական զեկույցը պատրաստվել է համանուն հետազոտության հիման վրա, որն իրականացրել է Նարինե Եգանյանը Հայաստանում կանանց հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Հետազոտական զեկույցում արտահայտված կարծիքներն ու տեսակետները հեղինակինն են եւ պարտադիր չէ, որ արտացոլեն Հայաստանում կանանց հիմնադրամի պաշտոնական դիրքորոշումները:

Համառոտագիր

Գենդերային ապատեղեկատվությունը կարող է լուրջ ազդեցություն ունենալ կանանց հասարակական գործունեության վրա: Հանրային գործունեություն ծավալող կանանց վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության խոսույթները ոչ միայն ազդում են հանրային ընկալումների վրա՝ աղճատելով և բացասաբար ուղղորդելով դրանք, այլև սահմանափակում են կանանց կարիերայի ձգտումները, նրանց համար ստեղծում անբարենպաստ միջավայր թե՛ անձնական, թե՛ աշխատանքային հարաբերություններում, շատ դեպքերում դառնում կարիերան ավարտելու պատճառ, ծայրահեղ դեպքում՝ լրջորեն ազդում +կյանքի որակի վրա:

Չնայած կան հետազոտություններ հանրային գործիչ կանանց վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության և դրա հետևանքների վերաբերյալ, միևնույն ժամանակ որոշակի չափով ուսումնասիրված են բնապահպանների թիրախավորման տարբեր դրսևորումներ, սակայն կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության դրսևորումները և դրանց հետևանքները մնում են քիչ ուսումնասիրված, իսկ Հայաստանի համատեքստում գրեթե ուսումնասիրված չեն, ինչը փորձել ենք անել այս հետազոտությամբ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել բնապահպան կանանց վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության խոսույթների փոխառնչությունը նրանց՝ հանրային գործունեությունը շարունակելու որոշման հետ:

Այս հետազոտության շրջանակում ընտրվել են որակական մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս թեման դիտարկելու խորքային և համատեքստային մոտեցմամբ՝ հաշվի առնելով թեմայի՝ քիչ ուսումնասիրված լինելը: Կիրառվել են հետևյալ մեթոդները. 1) Փաստաթղթերի և մեդիա նյութերի ուսումնասիրություն; 2) Փորձագիտական հարցազրույցներ; 3) Խորին հարցազրույցներ; 4) Կիսաձևայնացված առցանց հարցաշար:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության գեներացման հետևյալ մեխանիզմներն են կիրառվում. 1) Համատեքստից կտրված պատկերների և տեղեկությունների հրապարակում; 2) Կեղծ օգտահաշիվների և մոլորեցնող անուններով խմբերի ստեղծում; 3) Հայտարարություններ՝ բնապահպանական ակցիաների և միջոցառումների ժամանակ; 4) Այլաբանական, երկիմաստ բառաբանության կիրառում; 5) Անտրամաբանական կապեր տեսնելը:

Կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության գերակա պատմույթներն են. 1) Կանանց վերագրվող և պարտադրվող սոցիալական դերեր; 2) Կանանց բարոյական կերպարի թիրախավորում; 3) Արտաքին տեսքի թիրախավորում:

Ինչ վերաբերում է գենդերային ապատեղեկատվության և հանրային գործունեությունը շարունակելու փոխառնչությանը, հետազոտությունը ցույց է տալիս, որ գենդերային ապատեղեկատվությունը կին բնապահպանների մոտ հետևյալ երեք փոփոխությունն է առաջ բերում. վերաբերմունքի, վարքի և կյանքի որակի:

Ուշագրավ բացահայտում էին փոքր համայնքներում գործող կին բնապահպանների ինքնագրաքննության դրսևորումները, որոնք գենդերային ապատեղեկատվության յուրատեսակ «զսպօղակներ» են ծառայում՝ գծելով ակտիվության սահմանները: Այնուամենայնիվ, կին բնապահպանները գտել են գենդերային ապատեղեկատվությանը դիմակայելու իրենց մեխանիզմները. անհատական գործողություններին զուգահեռ՝ նրանք կարևորում են կոլեկտիվ ջանքերը, համերաշխությունը, միմյանց հետ փորձով կիսվելը:

Հիմնական հասկացություններ

→ Գենդերային ապատեղեկատվություն

Գենդերային ապատեղեկատվությունը ենթադրում է անձի գենդերի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հետ կապված կեղծ և ապակողմնորոշող տեղեկության կանխամտածված տարածում՝ հիմքում ունենալով քաղաքական, մշակութային կամ գաղափարական նպատակներ[1]:

Այս հետազոտության շրջանակում դիտարկում ենք կանանց վերաբերյալ նրանց սեռով/գենդերով պայմանավորված ապատեղեկատվության գեներացումն ու տարածումը: Դիտարկվում են նաև բոլոր այն դեպքերը, որոնք կարող են սեռի հիմքով ապակողմնորոշող բովանդակություն գեներացնել և տարածել՝ ապատեղեկատվության այլ հնարներ կիրառելով, ինչպիսին Spinning-ը և Concealing-ն են[2]:

Spinning: Տեղեկության ընտրողական ներկայացումը, փաստերը ցանկալի պատճառահետևանքային կապերով հանգուցելը՝ անտեսելով հակադրվող փաստերը՝ դրանով ձևավորելով պատմությը:

Concealing: Փաստերը միտումնավոր դուրս թողնելը, անցանկալի, բայց առանցքային տեղեկատվության քողարկումը՝ իրականության աղճատված պատկեր ստեղծելու համար:

→ Հասարակական նորմ

Որևէ խմբի անդամների ընկալումներում առկա կանոններն ու ստանդարտները, որոնք ուղղորդում կամ սահմանափակում են տվյալ խմբի անդամների վարքը՝ ենթադրելով «պատիժ» այդ կանոններից շեղվելու համար[3][4]:

Այս հետազոտության շրջանակում հասարակական նորմերը տարբեր գենդերային կարծրատիպերի ամբողջությունն են, որոնք սահմանափակում են տվյալ համայնքի ներկայացուցիչ կանանց գործողությունները, նրանց դնում են «շրջանակների» մեջ և չեն ընդունում այդ շրջանակներից դուրս գալը:

→ Խոսույթ

[1] Արդյունավետ լուսաբանում: Գենդերային ապատեղեկատվության դեմ պայքարի ուղեցույց, Institute for War & Peace Reporting – IWPR, 2024
[2] The Disinformation Age, Steven Livingston, Cambridge University Press, 2020
[3] The Handbook of Social Psychology, D. T. Gilbert, S. T. Fiske & G. Lindzey, Boston: McGraw-Hill, 1998
[4] Social Norms, Michael Hechter and Karl-Dieter Opp, The Russell Sage Foundation, 2001

Խոսույթն ընկալվում է որպես հասարակական վարքատեսակ կամ հասարակական պրակտիկայի ձև[5], որը փոխազդեցության մեջ է սոցիալական համակարգերի հետ[6]:

Այս հետազոտության շրջանակում խոսույթը նույն թեմայի վերաբերյալ առնչակից պատմույթների ամբողջությունն է, որը ի վերջո դառնում է կուռ համակարգ և փոխազդեցության մեջ է հասարակական նորմերի հետ:

→ Պատմույթ

Պատմույթը պատմություն պատմելն է ընտրողաբար: Մենք չենք պատմում որևէ հանգամանքի կամ դեպքի բոլոր մանրամասները. այն, ինչ մենք որոշում ենք պատմել, կարևորում ենք որևէ իրավիճակ կամ խնդիր ի ցույց դնելու, ընդգծելու համար[7]:

Այս հետազոտության շրջանակում պատմույթը գենդերային ապատեղեկատվության բոլոր այն դրսևորումներն են (պատկեր, տեքստ, տեսանյութ), որոնք տարածվում են հանրային հարթակներում՝ բնապահպան կանանց վերաբերյալ որոշակի կարծիք ձևավորելու նպատակով:

→ Կին բնապահպան

Այս հետազոտության շրջանակում կին բնապահպան ենք համարում բոլոր այն կանանց, ովքեր ակտիվ քաղաքացիական դիրքորոշում են հայտնում բնապահպանական հարցերի վերաբերյալ՝ անկախ նրանից՝ դրանք համահայաստանյան խնդիրներ են, թե որևէ առանձին համայնքի:

[5] Negotiating Gendered Discourses: Michelle Bachelet and Cristina Fernández De Kirchner, Latin American Gender and Sexualities, 2016

[6] Discourse and Social Change, Norman Fairclough, Cambridge: Polity Press, 1992

[7] Security, Disinformation and Harmful Narratives: RT and Sputnik News Coverage about Sweden, Maria Hellman, The Palgrave Macmillan Series in International Political Communication, 2024

Մեթոդաբանություն

Հետազոտության հիմնախնդիրը

Գենդերային ապատեղեկատվությունը կարող է լուրջ ազդեցություն ունենալ կանանց հասարակական գործունեության վրա: Հանրային գործունեություն ծավալող կանանց վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության խոսույթները ոչ միայն ազդում են հանրային ընկալումների վրա՝ աղճատելով և բացասաբար ուղղորդելով դրանք, այլև սահմանափակում են կանանց կարիերայի ձգտումները, նրանց համար ստեղծում անբարենպաստ միջավայր թե՛ անձնական, թե՛ աշխատանքային հարաբերություններում, շատ դեպքերում դառնում կարիերան ավարտելու պատճառ, ծայրահեղ դեպքում՝ լրջորեն ազդում կյանքի որակի վրա:

Քաղաքացիական ակտիվություն ունեցող կանանց գործունեության սահմանափակումը ոչ միայն բացասաբար է ազդում այդ կանանց կյանքի ու կարիերայի վրա, այլև շահարկում է հասարակական նորմերն ու վերարտադրվում դրանք բացասական համատեքստում: Գենդերային ապատեղեկատվությունը նաև խարխլում է ժողովրդավարական համակարգերը՝ նվազեցնելով նրանց նկատմամբ վստահությունը, ինչը իր հերթին լայն տարածք է տալիս դավադրապաշտական տեսությունների շրջանառման և ապատեղեկատվական արշավների ակտիվացման համար: Այսինքն՝ ձևավորվում է մի փակ շղթա, որի յուրաքանչյուր օղակ սնում է մյուսին:

Այս կամ այն պատճառով հանրային դարձած կանայք (անգամ նրանք, ովքեր իրենց կամքով չեն հանրային դարձել) կարող են թիրախավորվել գենդերային ապատեղեկատվության տարբեր դրսևորումներով: Շատ կարևոր է գենդերային և ինքնության հիմքով ապատեղեկատվության յուրաքանչյուր դեպք դիտարկել ընդհանուր խոսույթների համատեքստում՝ գնահատելով, թե որքանով են դրանք նպաստում այս կամ այն խոսույթի ամրապնդմանը: Գենդերային ապատեղեկատվության հիմնական խոսույթները, որոնք, ըստ ուսումնասիրությունների[8], տարածված են հայաստանյան լրատվամիջոցներում, հետևյալն են.

1. Զոհին մեղադրող դիսկուրս, օրինակ՝ երբ սեռական բռնության զոհին են մեղադրում իր հետ տեղի ունեցածի համար՝ նշելով, որ նա գայթակղիչ արտաքին ունի կամ ոչ բարոյական վարքագիծ:

[8] Գենդերային ապատեղեկատվությունը հայաստանյան լրատվամիջոցներում, Կոջոյան Ա., Հովհաննիսյան Լ., ARTEMIS Alliance, ՕքսԵՋեն հիմնադրամ, Երևան, 2024

2. Քաղաքական մտաշահարկման նպատակով իրականացվող դիսկուրս. օրինակ՝ քաղաքական գործընթացներ արժեզրկելու համար կարող են լրիվ այլ կողմից թիրախավորվել տվյալ ուժի ներկայացուցիչ կանայք:

3. Գենդերային հավասարության և հիմնահարցերի վերաբերյալ քաղաքականության և օրենսդրության մասին դիսկուրս, երբ փորձ է արվում մոլորեցնող բովանդակությամբ արժեզրկել այդ գործընթացները:

4. Կնոջը սեռականացնող, ապրանքայնացնող և առարկայնացնող դիսկուրս, օրինակ՝ եթե կնոջ մասնագիտական առաջընթացը վերագրվում է նրա հարաբերություններին ազդեցիկ տղամարդկանց հետ:

5. Գենդերի, ազգային անվտանգության և պաշտպանության հարցերի վերաբերյալ դիսկուրս, երբ գենդերային հարցերին վերաբերող գործընթացները ներկայացվում են որպես վտանգավոր:

Սա այն դեպքում, երբ վերը նշված ուսումնասիրության ծիրից դուրս են մնացել ատելության խոսքի դրսևորումները: Իսկ ահա հանրային կանանց վերաբերյալ ատելության խոսքի դրսևորումներն ուսումնասիրող հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանյան մեդիա տիրույթում ատելության խոսքի չափաբաժինը մտահոգիչ մասշտաբներ ունի, այդ թվում՝ սոցիալական մեդիայում: Սոցիալական մեդիայի օգտատերերի թիրախում հաճախ հայտնվում են կին հանրային և քաղաքական գործիչները[9]:

Մյուս կողմից սոցիալական մեդիան շարունակում է մնալ տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրներից մեկը մեծ թվով մարդկանց համար, իսկ մեդիայի նկատմամբ վստահությունը, ըստ Կովկասյան բարոմետրի 2024 թվականի արդյունքների[10], շարունակում է ցածր մակարդակի վրա մնալ:

[9] Կանանց թիրախավորող առցանց ատելության խոսքը հայաստանում, Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամ, Գյումրի, 2024
[10] https://caucasusbarometer.org/am/cb2024am/TRUMEDI/, տվյալը՝ 25/11/2025





https://crrc.am/caucasus-barometer/

Հայաստանի քաղաքացիական հասարակության կայացման գործընթացի հիմքում մեծապես ընկած են բնապահպանական պայքարները ու հանրային տարածքների պահպանման շուրջ ծագած բանավեճերը[11]: Այս

[11] Ի՞նչ անել, երբ հին ակտիվիզմը չի աշխատում. ռադիկալացնել ժողովրդավարությունը, «Սոցիոսկոպ» ՀԿ, Երևան, 2025

համատեքստում առանցքային է բնապահպան կանանց գործունեությունը, որը սահմանափակելու փորձեր են արվում վերջին տարիներին՝ հատկապես նրանց դեմ նախաձեռնվող ռազմավարական դատավարություններով (SLAPP)[12][13]: Հանրային մասնակցության դեմ ռազմավարական դատավարությունների զգալի մասը հենց բնապահպանների դեմ է ուղղված:

Միայն Լիդիան հանքարդյունաբերական ընկերության կողմից առնվազն 19 SLAPP է ներկայացվել բնապահպանների ու իրավապաշտպանների դեմ: Այս դատական հայցերը զգալի ֆինանսական և հոգեբանական ճնշում են դնում ակտիվիստների վրա՝ փաստացիորեն սահմանափակելով նրանց աշխատանքն ու վախեցնելով մյուսներին՝ բարձրաձայնելու իրավունքների խախտումների կամ հանքարդյունաբերության հետևանքով առաջացած բնապահպանական վնասների վերաբերյալ հարցերը: Դատական գործերին զուգահեռ՝ որոշ ակտիվիստներ ենթարկվել են ատելության խոսքի և ոտնձգությունների սոցիալական մեդիայում[14]:

Զնայած կան հետազոտություններ հանրային գործիչ կանանց վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության և դրա հետևանքների վերաբերյալ, միևնույն ժամանակ որոշակի չափով ուսումնասիրված են բնապահպանների թիրախավորման տարբեր դրսևորումներ, սակայն կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության դրսևորումները և դրանց հետևանքները մնում են քիչ ուսումնասիրված, իսկ Հայաստանի համատեքստում գրեթե ուսումնասիրված չեն, ինչը փորձել ենք անել այս հետազոտությամբ: Թեման քիչ ուսումնասիրված է, իսկ կոնկրետ փորձառությունների, հասարակական նորմերի և խոսույթների փոխառնչությունների ուսումնասիրությունը կարևոր է հասկանալու համար, թե որքանով է գենդերային ապատեղեկատվությունը պայմանավորում կանանց՝ հանրային գործունեությունը շարունակելու կամ դադարեցնելու որոշումները:

Հետազոտության շրջանակները

Նպատակ

Ուսումնասիրել բնապահպան կանանց վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության խոսույթների փոխառնչությունը նրանց՝ հանրային գործունեությունը շարունակելու որոշման հետ:

---

[12] Հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերը Հայաստանում. Մարդու իրավունքների տուն, Երևան, 2024
[13] (Զ)լռեցնելով շարժումը / Silencing a Movement, https://youtu.be/ays_nghWRwU, հղումը՝ 04/12/2025
[14] Նույն տեղում

Հետազոտության <u>օբյեկտը</u> կին բնապահպաններն են, իսկ <u>առարկան</u>՝ նրանց մասին տարածվող գենդերային ապատեղեկատվության և հանրային գործունեությունը շարունակելու որոշումների կապը:

<u>Խնդիրներ</u>

→ Պարզել, թե գենդերային ապատեղեկատվության ինչ խոսույթներ են գերակա բնապահպան կանանց վերաբերյալ:

→ Բացահայտել բնապահպան կանանց վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության պատմույթներ գեներացնելիս կիրառվող մեխանիզմները:

→ Դիտարկել գենդերային ապատեղեկատվության դեպքերի փոխառնչությունը կին բնապահպանների՝ հանրային գործունեությունը շարունակելու կամ դադարեցնելու որոշումների հետ:

Հետազոտության մեթոդաբանական ռազմավարությունը

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես են բնապահպան կանանց նկատմամբ կիրառվող գենդերային ապատեղեկատվության խոսույթները փոխառնչվում նրանց՝ հանրային գործունեությունը շարունակելու կամ դադարեցնելու որոշումների հետ: Թեման Հայաստանում քիչ ուսումնասիրված է, ուստի կիրառվել է որակական մեթոդաբանական մոտեցում, որը հնարավորություն է տալիս հասկանալու ոչ միայն դեպքերը, այլ նաև դրանց իմաստավորումը և սոցիալական համատեքստը:

Որակական մոտեցումը նպատակահարմար է դիտարկվել, քանի որ.

- ենթադրվում են բազմաշերտ և ոչ միշտ լայնորեն լուսաբանվող փորձառություններ,
- պահանջվում է բացատրական վերլուծություն,
- անհրաժեշտ է բացահայտել՝ ոչ թե միայն ինչ է տեղի ունենում, այլև ինչու և ինչպես է տեղի ունենում:

Հետազոտության շրջանակում կիրառվել են հետևյալ մեթոդները.

→ Փաստաթղթերի և մեդիա նյութերի ուսումնասիրություն

Իրականացվել է գրականության, մասնագիտական և քաղաքական փաստաթղթերի, ինչպես նաև մեդիա վերլուծությունների ուսումնասիրություն՝ խոսույթների նախնական քարտեզագրման և հասկացությունների տեսական շրջանակը ձևավորելու նպատակով:

Մեդիա նյութերի ուսումնասիրությունը կատարվել է հիմնականում հետազոտության մասնակիցների անձնական արխիվների հիման վրա, քանի որ ապատեղեկատվական բովանդակության զգալի մասը տարածվել է սոցիալական ցանցերում կեղծ կամ հատուկ նպատակով ստեղծված էջերից: Դրանք հաճախ փակվել են կարճ ժամանակում, ինչի հետևանքով դրանց ամբողջական վերարտադրումն առցանց հասանելի չի եղել: Սա ապահովել է տիպիկ, սակայն սահմանափակ ծավալի նյութերի ուսումնասիրման հնարավորություն:

→ Փորձագիտական հարցազրույցներ

Իրականացվել են հարցազրույցներ բնապահպանության և առնչակից, այդ թվում՝ մեդիա դաշտի փորձագետների, լրագրողների հետ՝ գնահատելու խոսույթների տարածվածության աստիճանը, դրանց կիրառման մեխանիզմները և կին բնապահպանների որոշումների վրա ունեցած հնարավոր ազդեցությունը: Փորձագիտական դիտարկումները նպաստել են տեսական շրջանակի հստակեցմանը և հարցերի կառուցվածքի ձևավորմանը:

→ Խորին հարցազրույցներ

Խորին հարցազրույցներ են իրականացվել կին բնապահպանների հետ՝ ինչպես համահայաստանյան, այնպես էլ համայնքային մակարդակում գործունեություն իրականացնողների: Այս մեթոդը կարևոր է եղել անհատական փորձառությունների, որոշումների կայացման շարժառիթների և դիմակայունության ռազմավարությունների ուսումնասիրության համար:

→ Կիսաձևայնացված առցանց հարցաշար

Հետազոտության վերջում կիրառվել է կիսաձևայնացված առցանց հարցաշար՝ հետախուզական նպատակով: Այն թույլ է տվել համադրել որակական տվյալները համացանցից օգտվողների դիրքորոշումների հետ և գնահատել հանրային ընկալումները գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ:

Նկատառումներ ընտրանքի վերաբերյալ

Հետազոտության մասնակիցների ընդգրկումն իրականացվել է նպատակաուղղված ընտրանքի և ձնագնդի մեթոդի համադրությամբ: Նպատակաուղղված ընտրանքը կիրառվել է ներգրավելու այն մասնակիցներին, ովքեր ունեն ակնհայտ փորձառություն գենդերային ապատեղեկատվության դրսևորումների հետ կամ բնապահպանական ոլորտի տեսանելի դերակատարներ են:

Զնագնդի մեթոդը կիրառվել է այն դեպքերում, երբ թեմայի զգայուն բնույթը և անհատական անվտանգային մտավախությունները կամ հանրային չլինելու որոշումը դժվարացնում էին հնարավոր մասնակիցների բացահայտումը: Այս մոտեցումը հնարավորություն տվեց հասնելու նոր մասնակիցների՝ արդեն ներգրավված անձանց ուղղորդմամբ, ինչը բնորոշ է նմանատիպ ուսումնասիրություններին:

Ընտրանքի տրամաբանությունը ապահովել է.

- թեմային առնչվող իրական փորձառություն ունեցող մասնակիցների ընդգրկում,
- խոցելի խմբերի հանդեպ զգայուն մոտեցում,
- խոսույթի խորքային վերլուծության համար անհրաժեշտ տվյալների ստացում:

Թեև այս մեթոդը չի ապահովում ներկայացուցչականություն, այն նպատակահարմար է փորձառության մակարդակի վերհանման և թեմատիկ ուսումնասիրության համար:

Մեթոդներ

Այս հետազոտության շրջանակում ընտրվել են որակական մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս թեման դիտարկելու խորքային և համատեքստային մոտեցմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնապահպան կանանց վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության խոսույթները Հայաստանում դեռևս քիչ ուսումնասիրված են:

Որակական հետազոտությունները թույլ են տալիս նպատակային ընտրությամբ ներգրավել այն մասնակիցներին ու օբյեկտներին, որոնք լավագույնս կօգնեն հետազոտողին հասկանալ հիմնախնդիրը[15]:

Որակական մեթոդները ոչ միայն թույլ են տալիս վերհանել անհատական փորձառությունները, այլ նաև դիտարկել դրանց համատեքստը, փոխհարաբերություններն ու փոխառնչությունները հասարակական նորմերի հետ:

Դրանք հնարավորություն են տալիս բացահայտելու.

→ թե ինչպես են կանայք ընկալում իրենց ուղղված գենդերային ապատեղեկատվությունը,

[15] Research Design Qualitative, Quantitative, and Mixed Methods Approaches, Fifth Edition, John W. Creswell, J. David Creswell, SAGE Publications, London, 2018

→ ինչպիսի ազդեցություն է այն ունենում անձնական և հանրային գործունեության վրա,

→ ինչ մեխանիզմներով և հարթակներով են գեներացվում ու տարածվում խոսույթները,

→ ինչպես են կանայք գնահատում և դիմակայում հետևանքներին, ինչպես նաև գործում այդ իրավիճակում:

Բացի դրանից՝ որակական մեթոդները հնարավորություն են տալիս խորությամբ հասկանալու, թե ինչպես են կարծրատիպերն ու դրանց հիման վրա ձևավորված պատմույթները պայմանավորում որոշումների կայացման գործընթացը. այս երևույթը դժվար է վերլուծել քանակական տվյալներով, քանի որ պահանջում է սոցիալական իրականության բացատրական դիտարկում: Այս իմաստով՝ որակական ուսումնասիրությունը դիտարկվում է նաև որպես նոր գիտելիքի ձևավորման միջոց, ոչ թե միայն գոյություն ունեցող երևույթների չափման գործիք:

Այսպիսով՝ այս մոտեցումն ընտրելը հիմնավորված է հետևյալով.

- թեման քիչ ուսումնասիրված է,
- ենթադրվում են բազմաշերտ և ոչ միշտ լուսաբանվող փորձառություններ,
- անհրաժեշտ է հասկանալ ոչ միայն, թե ինչ է տեղի ունենում, այլ նաև՝ ինչու և ինչպես է տեղի ունենում:

Հետազոտությունն իրականացնելիս կիրառել ենք հետևյալ որակական մեթոդները.

→ Փաստաթղթերի ուսումնասիրություն: Հետազոտության շրջանակում իրականացվել է փաստաթղթային վերլուծություն, որն ուղղված է եղել թեմայի շուրջ առկա գիտելիքի համակարգմանը և խոսույթների դաշտի նախնական քարտեզագրմանը:
Ուսումնասիրվել են. ա) ակադեմիական աղբյուրներ, ինչպես նաև թեմային առնչվող այլ ձևաչափերի նյութեր (զեկույցներ, քաղաքական փաստաթղթեր, մեդիա վերլուծություններ, միջազգային կազմակերպությունների ուսումնասիրություններ); բ) մեդիա հրապարակումներ, որոնք պարունակում են ուսումնասիրության առարկա գենդերային ապատեղեկատվության դեպքեր:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել.

- հասկանալու գենդերային ապատեղեկատվության գոյություն ունեցող ձևակերպումները և գործառույթները,
- վերհանելու, թե ինչպիսի խոսույթներ և մեխանիզմներ են արձանագրվել նախկինում,
- ձևակերպելու հետազոտական հարցերի կոնկրետ շրջանակը և վերլուծական ուղղությունները,
- ապահովելու, որ հետագա տվյալների հավաքագրումն ունենա թեմատիկ և տեսական հենք:

→ Փորձագիտական հարցազրույցներ: Հարցազրույցներ են անցկացվել բնապահպանության ոլորտի մի շարք փորձագետների և լրագրողների հետ՝ բացահայտելու, թե ինչպես են փորձագետները գնահատում գենդերային ապատեղեկատվության տարածվածության աստիճանը և դրանց հնարավոր ազդեցությունը՝ բնապահպան կանանց որոշումների կայացման վրա, ինչպիսի դրսևորումներ են նկատել և թե ինչպես են բացատրում դրանց գեներացման ու տարածման նպատակները:

Փորձագետների տեսակետները հնարավորություն են տալիս.

- դիտարկելու խնդիրը հետազոտական և գործնական դիրքորոշումներից,
- վերհանելու գործող մեխանիզմները, որոնց միջոցով ձևավորվում և շրջանառվում են այս խոսույթները,
- գնահատելու արդյունքների հետագա հաղորդակցման հնարավորությունները՝ դաշտում փոփոխություններ բերելու տեսանկյունից:

Այս փուլը ոչ միայն հարստացնում է ուսումնասիրության վերլուծական դաշտը, այլև թույլ է տալիս հիմնավորել հետազոտության արդիականությունն ու իրական կիրառելիությունը հասարակական դաշտում:

Խորին հարցազրույցներ: Հետազոտության գլխավոր բաղադրիչներից է եղել խորին հարցազրույցների իրականացումը կին բնապահպանների հետ, ովքեր գործունեություն են ծավալում ինչպես համահայաստանյան մակարդակով, այնպես էլ համայնքային մակարդակում: Այս մեթոդը թույլ է տվել ներթափանցելու անհատական փորձառությունների դաշտ՝ հասկանալու.

- թե ինչպես են նրանք անհատական մակարդակում զգում և մեկնաբանում իրենց նկատմամբ ուղղված գենդերային ապատեղեկատվության խոսույթները,
- արդյո՞ք և որքանով են այդ խոսույթները պայմանավորում նրանց հանրային ներկայության, ինքնավստահության կամ գործունեության շարունակման որոշումները,

- դիմակայունության հնչպիսի ռազմավարություններ են կիրառվում տարբեր միջավայրերում, ներառյալ՝ մեդիա, համայնք, բողոքի առարկայի շուրջ շահակիցներ, մասնագիտական շրջանակներ:

Այս մեթոդը կարևոր է հատկապես այն պատճառով, որ թույլ է տալիս բացահայտել անտեսանելի կամ քիչ երևացող գործընթացներ, որոնք չեն կարող լիովին արտացոլվել փաստաթղթային ուսումնասիրության կամ փորձագիտական գնահատման միջոցով: Խորին հարցազրույցները հնարավորություն են տվել ուսումնասիրելու ոչ միայն դեպքերը, այլ նաև դրանց անձնական իմաստավորումը, ինչը կարևոր է հետազոտության վերլուծության համար:

Կիսաձևայնացված առցանց հարցաշար: Հետազոտության ավարտական փուլում կիրառվել է կիսաձևայնացված առցանց հարցաշարի մեթոդը, որը իրականացվել է հետախուզական նպատակով: Այս մեթոդը ուղղված է եղել նախնական տվյալների համադրմանը. այն հնարավորություն է տվել ստացված որակական տեղեկատվությունը համեմատելու համացանցից օգտվողների մոտ առկա դիրքորոշումների և ընկալումների հետ:

Կիսաձևայնացված ձևաչափը թույլ է տվել պահպանել հարցերի հիմնական կառուցվածքը՝ միաժամանակ ապահովելով պատասխանողների ազատությանը և մեկնաբանման հնարավորությանը, ինչը կարևոր է քիչ ուսումնասիրված թեմաների պարագայում: Առցանց հարթակի օգտագործումը նպաստել է.

- հասանելիությանը,
- տարբեր տարիքային և սոցիալ-մշակութային խմբերի ներգրավմանը,
- գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ հանրային տրամադրությունների նախնական քարտեզագրմանը:

Այս մեթոդը չի դիտարկվել որպես հիմնական տվյալների աղբյուր, այլ որպես լրացուցիչ վերլուծական շերտ, որը հնարավորություն է տվել հասկանալու, թե որքանով են փորձառությունները և ընկալումները համընկնում կամ տարբերվում լայն հանրության կարծիքներից:

Սահմանափակումներ

Հետազոտության շրջանակում կիրառվել է նպատակաուղղված ընտրանք՝ ձնագնդի մեթոդի համադրմամբ: Այս մոտեցումը թույլ է տվել ներգրավել այն մարդկանց, ովքեր ունեն փորձառություն կամ ուսումնասիրության

թեմայի վերաբերյալ տեղեկացվածություն: Սակայն տվյալ ընտրանքի եղանակը և հետազոտության որակական լինելը միաժամանակ ենթադրում են որոշ սահմանափակումներ.

- չի ապահովում լայն ներկայացուցչականություն;
- հնարավոր է որոշ տեսակետներ գերակշռեն, մինչդեռ այլ խմբերի ձայները նկատելի չլինեն;
- արդյունքները չեն կարող ընդհանրացվել բոլոր բնապահպան կանանց վրա Հայաստանի մասշտաբով;
- հետազոտական զեկույցում մեդիա դաշտից օրինակները մեծ մասամբ չեն մեջբերվել նույնությամբ՝ խուսափելով վերարտադրելուց գենդերային ապատեղեկատվության ու ատելության խոսքի այնպիսի դրսևորումները, որոնք հակասում են էթիկական նորմերին և կարող են կրկնակի թիրախավորել և/կամ նույնականացնել հետազոտության մասնակիցներին, իսկ դա անանունության սկզբունքի խախտում կլինի:

Մեկ այլ սահմանափակում, որը կապված է դիտարկված մեդիա նյութերի հետ, հետևյալն է.

Ուսումնասիրված մեդիա հրապարակումները հիմնականում հասանելի են եղել մասնակիցների անձնական արխիվների միջոցով, քանի որ դրանք տարածվել են սոցիալական ցանցերում կեղծ կամ կարճաժամկետ էջերից, որոնք արագորեն փակվել են իրենց «առաքելությունը» կատարելուց հետո: Սա սահմանափակել է դրանց ամբողջական հասանելիությունը և առցանց մեդիա արխիվներում դրանց որոնման հնարավորությունը: Այդուհանդերձ, տվյալ մոտեցումը թույլ է տվել հավաքել տիպիկ և կարևոր դեպքեր, որոնք հնարավոր չէր հասանելի դարձնել այլ մեթոդներով:

Այս իմաստով՝ ներկայացված արդյունքները պետք է դիտարկել որպես թեմատիկ և փորձառության մակարդակի վերհանում, այլ ոչ թե ամբողջական վիճակագրական պատկերի ներկայացում, ինչը որակական հետազոտությունը չի ենթադրում: Կարևոր է նշել, որ կիրառված մեթոդը հնարավորություն է տվել ուսումնասիրելու քիչ տեսանելի և հաճախ չլուսաբանվող փորձառություններ, ինչը այս հետազոտության հիմնական նպատակն է:

Էթիկական նկատառումներ

Հետազոտության ընթացքում պահպանվել են էթիկական բոլոր չափորոշիչները, ապահովվել են մասնակիցների իրավունքները և անձնական տվյալների գաղտնիությունը: Խորին և փորձագիտական

հարցազրույցների ժամանակ մասնակիցներին ներկայացվել է հետազոտության նպատակն ու մեթոդաբանությունը, նրանց հնարավորություն է տրվել որոշելու՝ մասնակցել հարցմանը, կիսվել իրենց փորձառություններով կամ հրաժարվել դրանցից:

Թեմայի զգայուն բնույթով պայմանավորված և հնարավոր շահարկումներից խուսափելու նպատակով՝ խորին հարցազրույցների արդյունքներն ամփոփվել են անանուն, ընդհանրացված ձևով՝ բացառելով անձանց նույնականացումը, ինչպես նաև ապահովելով տվյալների գաղտնիության պահպանումը հանրային և մասնագիտական հրապարակումների ընթացքում:

Տվյալների հուսալիությունը և վերլուծությունը

Զնագնդի մեթոդի համադրմամբ նպատակուղղված ընտրանքի կիրառումը հնարավորություն է տվել ընտրելու հետազոտության թեմային առավելագույնս համապատասխանող մասնակիցների: Նախ ընտրվել են ըստ մեդիա հրապարակումների ամենաակտիվ կին բնապահպանները, որոնք ակտիվորեն մասնակցել են վերջին հինգ տարիներին Հայաստանում նախաձեռնված բնապահպանական ակցիաներին: Կապ է հաստատվել նրանց հետ, ներկայացվել հետազոտության նպատակը և առաջարկվել ներգրավվել խորին հարցազրույցների բաղադրիչում որպես մասնակից: Զնայած նախնական ցանկն ավելի մեծ էր, սակայն ոչ բոլորն են ցանկություն հայտնել զրուցելու այդ թեմայով, այնուամենայնիվ ուղղորդել են դիմելու իրենց կարծիքով հետազոտության թեմային ավելի համապատասխան անձանց: Խորին և փորձագիտական հարցազրույցների մասնակիցներին ևս առաջարկվել է նշել այլ անձանց անուններ, որոնք, իրենց կարծիքով կարող են արժեքավոր տեղեկատվություն տրամադրել հետազոտության համար: Այս սկզբունքով կազմվել է հետազոտության մասնակիցների հիմնական ցանկը, որը հնարավորություն է տվել ներառելու ինչպես համահայաստանյան ակցիաներին ակտիվություն ցուցաբերած, այնպես էլ Հայաստանի տարբեր համայնքներում բնապահպանական ակտիվություն դրսևորած կանանց: Հատուկ նշենք, որ խորին հարցազրույցների մասնակիցների զգալի մասի անունները կրկնվել են բոլոր մասնակիցների մոտ, ինչը վերահաստատում է ընտրանքի արդյունավետությունը և ապահովում տվյալների հուսալիություն:

Հիմնական բացահայտումները

«Աղջի, անասված, նստի վրանում,
Ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ անում»
Հովհաննես Թումանյան, «Անուշ»

Հետազոտության շրջանակում կիրառված հարցաշարերը պարունակել են և՛ բովանդակային հարցադրումներ, որոնք հետազոտության հիմնական բացահայտումների առանցքն են կազմում, և՛ հետախուզական հարցադրումներ՝ հետազոտության հետագա ընթացքը ըստ անհրաժեշտության փոփոխելու, հարմարեցնելու համար: Այսինքն՝ այդ հարցերի պատասխանները հիմնական բացահայտումներում չեն արտահայտվել, բայց օգնել են հետազոտական տվյալների հուսալիությունն ապահովելուն:

Ուսումնասիրված մեդիա հրապարակումները հիմնականում հասանելի են եղել մասնակիցների անձնական արխիվների միջոցով, քանի որ դրանք տարածվել են սոցիալական ցանցերում կեղծ կամ կարճաժամկետ էջերից, որոնք արագորեն փակվել են իրենց «առաքելությունն» իրականացնելուց հետո[16]:

Ապատեղեկատվություն, այլ մանիպուլատիվ տեղեկատվություն ստեղծելու և տարածելու մեխանիզմներին մասամբ անդրադարձանք ներածական մասում: Այստեղ կնշենք նրանք, որոնք բացահայտել ենք հենց այս հետազոտության առարկան ուսումնասիրելիս:

Հիմնական մեխանիզմները

1) Համատեքստից կտրված պատկերների և տեղեկությունների հրապարակում

Այս մեխանիզմը հիմնված է իրական նյութի ընտրողական ներկայացման վրա. լուսանկարները, կարճ տեսանյութերը կամ արտահայտությունները ներկայացվում են առանց դրանց ամբողջական պատմության, ժամանակային հաջորդականության կամ պայմանների: Արդյունքում ստեղծվում է կեղծ տպավորություն, որը կարող է ամբողջությամբ հակասել իրական իրավիճակին: Այս մոտեցումը հաճախ օգտագործվում է

[16] Հանքահենների ֆեյք էջերը, https://www.facebook.com/watch/?v=2305232073040414&t=4, հղումը՝ 04/12/2025

զգացմունքային արձագանք հրահրելու, կնոջ պահվածքը «չափազանց ակտիվ» կամ «անկառավարելի» ներկայացնելու, ինչպես նաև նրա մասնագիտական մոտիվացիան կասկածի տակ դնելու համար:

2) Կեղծ օգտահաշիվների և մոլորեցնող անուններով խմբերի ստեղծում

Սոցիալական հարթակներում արհեստական ակտիվությունը նպաստում է ապատեղեկատվության արագ տարածմանը: Կեղծ օգտահաշիվները կամ իրական կազմակերպություններին նմանվող անվանումներով խմբերը ստեղծում են վստահելիության պատրանք, ինչը հեշտացնում է բովանդակության շրջանառությունը: Այսպիսի խմբերը կարող են համակարգված ձևով տարածել նույն հաղորդագրությունները, ուժեղացնել մանիպուլյատիվ մեկնաբանությունները և ստեղծել «հանրային կարծիքի» կեղծ պատրանք: Դրանք հաճախ ուղղված են անհատի հեղինակության խարխլմանը կամ նրա նախաձեռնությունների նկատմամբ անվստահություն սերմանելու նպատակին:

3) Հայտարարություններ բնապահպանական ակցիաների և միջոցառումների ժամանակ

Բնապահպանական ակցիաների, հանրային քննարկումների կամ բողոքի միջոցառումների ժամանակ կին բնապահպանների հասցեին արվող հայտարարությունները կարող են դառնալ նպատակային թիրախավորված խոսույթ: Սրանք հաճախ օգտագործվում են՝

- նվազեցնելու նրանց մասնագիտական հեղինակությունը,
- կասկածի տակ դնելու նրանց շարժառիթները,
- կամ ներկայացնելու նրանց որպես չափազանց հուզական, «ոչ մասնագիտական» կամ «քաղաքական օրակարգ ունեցող» դերակատարների:

Նման հայտարարությունները երբեմն տրվում են բարձր լարվածությամբ իրավիճակներում, ինչը հեշտացնում է դրանց արագ տարածումը: Բացի դրանից՝ միջոցառումների դինամիկան հնարավորություն է տալիս առանձին արտահայտություններ կամ պահվածքի տարրեր դուրս բերելու համատեքստից և ներկայացնելու այնպես, կարծես դրանք ամբողջական կերպարն են բնութագրում: Այս մեխանիզմը նպաստում է կնոջ՝ որպես բնապահպանական գործընթացների լեգիտիմ մասնակից, արժեզրկմանը և հանրային վստահության նվազեցմանը:

4) Այլաբանական, երկիմաստ բառաբանության կիրառում

Երկիմաստ կամ այլաբանական լեզուն հնարավորություն է տալիս թիրախավորողներին ներկայացնելու վիրավորական կամ արժեզրկող ենթատեքստ՝ առանց անմիջական մեղադրանքի: Օգտագործվող արտահայտությունները կարող են արտաքուստ սարկաստիկ, «կատակային» կամ չեզոք թվալ, բայց իրականում ունեն սեռին և գենդերին առնչվող ենթատեքստ. օրինակ՝ կասկածի տակ են դրվում կնոջ մոտիվացիաները, նպատակը կամ բարոյական հեղինակությունը: Այսպիսի խոսույթը վտանգավոր է, քանի որ թույլ է տալիս պատասխանատու կողմին խուսափել ուղղակի պատասխանատվությունից՝ միևնույն ժամանակ ստեղծելով բացասական ենթատեքստ և ազդելով հանրային ընկալումների վրա:

5) Անտրամաբանական կապեր տեսնելը[17]

Այս մեխանիզմը ենթադրում է, որ իրար հետ բացարձակ կապ չունեցող փաստերը կամ ենթադրությունները համադրվում են մեկ պատմության մեջ. հյուսվում է պատմություն, որը տրամաբանական հենք չունի: Այնուամենայնիվ, այդ պատմությունը սպասարկում է արդեն առկա համոզմունքները և ձեռնտու է պատմությունը հյուսողներին՝ իրենց ուղերձները ամրապնդելու համար: Սա կարող է լինել և՛ գործընթացի շահագրգիռ կողմերի նախաձեռնությունը, և՛ այլ անձանց, օգտատերերի, որոնք անձնական շահ չունեն, բայց ենթագիտակցաբար աջակցում են արդեն առկա հասարակական նորմերին՝ տրամաբանական սխալ կապերով մեկնաբանելով իրադարձությունները:

Այսպիսով՝ անտրամաբանական կապերի վերագրումը դառնում է գործիք, որը թույլ է տալիս պահպանել և ամրապնդել գոյություն ունեցող կարծրատիպային պատկերացումները՝ ուշադրությունը շեղելով կին բնապահպանների բուն գործունեությունից և այդ գործունեությունը արժեզրկելու փորձեր անելով:

Հետազոտության հիմնական բացահայտումները կներկայացնենք հետևյալ կառուցվածքով.

1) Կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության հիմնական խոսույթներն ու դրանց դրսևորումները:

---

[17] Սա տրամաբանական սխալի տեսակ է: Տրամաբանական սխալը տրամաբանության և հռետորաբանության մեջ ոչ ճշմարիտ փաստարկումն է, որը խաթարում է փաստարկի տրամաբանական վավերությունը կամ ավելի ընդհանրական մակարդակում՝ փաստարկի կուռ տրամաբանական կառուցվածքը: Տրամաբանական սխալները լինում են ֆորմալ կամ ոչ ֆորմալ: Սրանք մարդկանց համոզելու ժամանակ փաստարկումներում սովորաբար գործածվող ոճեր են, որոնցում շեշտը դրվում է հաղորդակցության և դրա արդյունքների, ո՛չ թե տրամաբանության ճշգրտության վրա, և կարող են կիրառվել անկախ առաջադրվող մտքի ճշմարիտ կամ ոչ ճշմարիտ լինելուց:
Քննադատական մտածողության և մեդիագրագիտության դասընթացներ. Հավելյալ ուսումնա-մեթոդական նյութեր, Պրակ առաջին, Տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, https://epfarmenia.am/sites/default/files/inline-files/Critical_Thinking_Manual_Part_1_EPF_31July2018.pdf

2) Կին բնապահպանների արձագանքը՝ իրենց և այլ բնապահպան կանանց մասին գենդերային ապատեղեկատվության դեպքերին և դիմակայունության մեխանիզմները:

3) Գենդերային ապատեղեկատվության փոխառնչությունը կին բնապահպանների կյանքի որակի ու որոշումների հետ. փորձառություն և փորձագիտական հայացք:

4) Գենդերային ապատեղեկատվության «զսպօղակները». հետազոտական հայացք:

1. Կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության հիմնական խոսույթներն ու դրանց դրսևորումները

Հետազոտության ենթանպատակներից մեկը կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության խոսույթները հանրային գործունեություն ունեցող այլ կանանց վերաբերյալ տարածվող գենդերային ապատեղեկատվության խոսույթների հետ համեմատության մեջ դիտարկելն էր: Այս առումով պետք է նշել, որ ինչքան էլ սրանք հատվող համատեքստեր են, բայց գենդերային ապատեղեկատվության խոսույթների հստակ միտում ենք տեսնում բնապահպան կանանց վերաբերյալ: Այսպես, եթե առհասարակ հանրային դարձած կանանց մասին հետևյալ խոսույթներն են գերակա. 1) Զոհին մեղադրող խոսույթ, 2) Քաղաքական մտաշահարկման նպատակով իրականացվող խոսույթ, 3) Գենդերային հավասարության և հիմնահարցերի վերաբերյալ քաղաքականության և օրենսդրության մասին խոսույթ, 4) Կնոջը սեռականացնող, ապրանքայնացնող և առարկայնացնող խոսույթ, 5) Գենդերին, ազգային անվտանգության և պաշտպանության հարցերին վերաբերյալ խոսույթ, ապա կին բնապահպանների վերաբերյալ գերակա են.



Երկու գործունեության ոլորտը: Այս խոսույթներին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ:

Ինչպես հետազոտության մասնակիցներից մեկն է նշել.

> «Կանանց նկատմամբ ավելի ագրեսիվ ձևով են կիրառվում /նկատի ունի՝ թիրախավորումները/: Մտածում են, որ խեղճ են, կկոտրվեն, բայց սխալվում են: Ես գիտեմ՝ ինչի եմ անում ու ինչ եմ անում»:

Բնապահպանական հարցերով փորձագետը ևս կարծում է, որ ակտիվ կին բնապահպաններն ամենից շատ են թիրախավորվում.

«Ամենածանր վիճակում /նկատի ունի գենդերային ապատեղեկատվության տեսանկյունից/ ակտիվ կանայք են, և ովքեր աշխատում են տեղեկատվական դաշտում»:

Մեխանիզմները չնայած երկու դեպքում էլ նույնն են:

Վերը նկարագրված խոսույթներում առկա պատմույթները կարող ենք դասակարգել հետևյալ 3 խմբերում.



1) Կանանց վերագրվող և պարտադրվող սոցիալական դերեր

Կարծրատիպերով առաջնորդվող հասարակություններում, որտեղ ամրացած են տղամարդկանց դերը կարևորող մի շարք հասարակական նորմեր, բնութագրական են կնոջ գործունեության ոլորտները սահմանափակող, նախանշող խոսույթները: Ուշագրավ է, որ եթե քաղաքականությամբ զբաղվող կանանց դեպքում հաճախ քննարկվում է նրանց գործունեության ոլորտում կայացրած որոշումները, հնչեցրած կարծիքները, որպես պաշտոնյա դրսևորած վարքը, ապա բնապահպան կանանց դեպքում գերիշխող է հիմնականում նրանց՝ «իրենց տեղը ցույց տալու» միտումը:

«Անընդհատ քեզ տեղդ են ցույց տալիս, եթե քո տեղից մի քիչ շեղվում ես, սկսում են....»

Կին բնապահպան

«Որպես կին դու ուղղակի իրավունք չունես հանրային լինես ու խոսես էս թեմաների մասին»

Կին բնապահպան

«Հանրային գործունեություն ծավալող կանանց նկատմամբ միշտ եղել է դա՝ «աղջիկ ես, ինչ ես ընկել փողոցները, գիշերները տուն չես գնում»: Դրանք հիմնականում մեդիայում չեն, այլ նեղ խմբերում են հնչում, այդ թվում՝ ընտանիքում, հարևանների շրջանում»:

Կին բնապահպան

«Կանանց հիմնականում ասում են՝ դու կին ես գնա քո տնով զբաղվի, քո ընտանիքով, տեղը ցույց են տալիս»:

Բնապահպանական հարցերով փորձագետ

Այսինքն՝ քննարկումը նույնիսկ չի հասնում նրանց գործունեությանը: Կին բնապահպանները միայն սեռով/գենդերով պայմանավորված, այսպես ասած, «դելեգիտիմացնելու» միտում կա:

«Ինձ ասում էին՝ ամաչ չունե՞ս լվալու, որ եկել ես էստեղ: Կամ՝ գնա էրեխուդ նայի, էս կնոջ տեղ չի, դու ընտանիք չունե՞ս...»

Կին բնապահպան

«Համարում են, որ հայեցի, խելոք կինը, հատկապես որոշ մարզերի գյուղերում, չպիտի մասնակցի նման միջոցառումների: Պատահական չէ, որ այդ գյուղերում համայնքային իրադարձություններին հավաքվում են հիմնականում տղամարդիկ, մեկ-երկու համագյուղացի կին»:

Բնապահպանական հարցերով փորձագետ

Բնապահպան Աննա Շահնազարյանը «Կանանց հարթակ» փոդքասթի ընթացքում ևս հաստատում է այս վնասակար խոսույթի առկայությունը. «Ամենացավալին էն է, որ հատկապես կին ակտիվիստները թիրախավորվում են գենդերային իրենց դերից ելնելով՝ «դուք կին եք, ինչ գործ ունեք» և այլն, և այլն: Շատ վնասակար բառապաշար է օգտագործվում, որը, իրոք, հոգեկան վնասվածք է առաջացնում»:[18]

Հետաքրքիր է, որ «էս կնոջ տեղ չի» արտահայտությունը իր յուրահատուկ դրսևորումն ունի որոշ փոքր համայնքներում բնապահպանական գործողությունների համատեքստում: Այս հարցը պետք է դիտարկել հասարակական նորմերի համատեքստում: Այսինքն՝ տղամարդկանց դերն արժևորող հասարակական նորմերը, որոնք ձևավորում են միջավայրն ու կնոջ տեղն այդ միջավայրում՝ երաշխավորելով կանխատեսելի սոցիալական վարք:

[18] Կանանց հարթակ #15 Աննա Շահնազարյան | Թեհմինե Ենոքյան, Բուն ԹՎ, https://youtu.be/fktAa-rTrVA, հղումը՝ 14/12/25

«Փոքր ժամանակից ներարկել են մեր մեջ, որ մնանք այդ համակարգում [նկատի ունի հասարակական նորմերը]: Ու որ շեղվում ենք, թվում է, թե սխալ ենք անում»:

Կին բնապահպան

«Նորմերը սոցիալականացման արդյունք են, որն էլ իր հերթին հիմնված է համայնքի անդամների մեծամասնության ակնկալիքների վրա»:[19]

Այստեղ այդ հասարակական նորմը լռելյայն է կիրառվում. ուղղակի տեղացի կանայք գիտեն, որ դա «կնոջ տեղ չի», ու կին բնապահպանները ակտիվորեն թիրախավորվում են այդ գործողությունների համար: Սա, իհարկե, «Տղամարդիկ են որոշում կայացնողը» հասարակական նորմի հստակ դրսևորում է:

«Մեզ մոտ մի քիչ ուրիշ ձև է. բոլորը տղամարդ են [քաղաքացիական ակցիաների մասնակիցները]: Դու մենակ գնաս մասնակցելու, մի քիչ սիրուն չի նայվում: Տղամարդկանց մի տոկոս կա, որ իրենց համար նորմալ չի ու խոչընդոտում են իրենց ընտանիքի կանանց մասնակցությունը»:

Կին բնապահպան

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ կա նաև հակառակ պատկերը. տղամարդիկ ավելի խոցելի են, կառավարելի՝ կրկին հասարակական նորմերի թելադրանքով: Տղամարդկանց գործողությունները սահմանափակելն ու նրանց հետ հաշվեհարդար տեսնելն «ավելի պարզ մեթոդներով» է, դրա համար էլ տղամարդիկ «չեն համարձակվում» ակտիվություն ցուցաբերել:

«Նույնիսկ կարծում եմ, որ աղջիկների համար ավելի հեշտ է, տղաները կարող են տղայական խնդիրների առաջ կանգնել»:

Կին բնապահպան

[19] Social Norms, Michael Hechter and Karl-Dieter, Russel Sage Foundation, New York, 2001, 149

Հետազոտության մասնակիցները նշում են, որ բնապահպանական ակցիաների, հանրային լսումների[20] ժամանակ կանանց ներկայությունը բացի նրանից, որ նվազեցնում է հայհոյանքների, վիրավորական բառերի կիրառման հավանականությունը, նաև մեղմացնում է լարումը կողմերի միջև, նպաստում ավելի կառուցողական քննարկումների:

> «Պետք է բացատրվի, որ կանայք շատ մասնակցեն հանրային լսումներին: Համ մթնոլորտը կփոխվի, տղամարդիկ իրենց կզսպեն և չեն հայհոյի, համ էլ կանանց ձայները լսելի են. եթե տղամարդու «ձայնը կտրեցնում են», խանգարում, ապա տեղացի կանանց որպես կանոն չեն լռեցնում ու ուշադիր լսում են»:
>
> Կին բնապահպան

Չնայած այս դիտարկումը կանանց՝ հանրային միջոցառումների վրա դրական ազդեցության մասին է, այնուամենայնիվ նկատենք, որ այս պարագայում էլ կանայք կրկին դիտարկվում են հասարակական նորմերի շրջանակում՝ մի կողմից տղամարդկանց աչքերում, մյուս կողմից՝ հենց իրենց՝ կին բնապահպանների աչքերում: Այս երևույթը հատկապես նկատելի է փոքր համայնքներում անցկացվող միջոցառումների դեպքում: Սրան ավելի հանգամանալից անդրադառնում ենք Գենդերային ապատեղեկատվության «զսպօղակները». հետազոտական հայացք գլխում:

Այսպիսով՝ կարծրատիպային և վնասակար հասարակական նորմերով կառավարվող հասարակություններում նորմերը «գծում են» սեռերի (գենդերային ինքնությունների) դերերն ու տեղը. մեկ տղամարդկանց համար սահմաններ գծելով, մեկ՝ կանանց: Սա, իհարկե, կին բնապահպանների գործունեության համար զգալի խնդիրներ է առաջացնում: Մինչդեռ, կանանց ներգրավման խրախուսումը կարող էր նպաստավոր միջավայր ստեղծել՝ բացառելով բռնությունն ու խտրականության տարբեր դրսևորումներ:

2) Կանանց բարոյական կերպարի թիրախավորում

«Երբ փաստերը չեն հերիքում, նրանք սկսում են մեր դեմ այլ եղանակներով պայքարել»,-ասում է հետազոտության մասնակիցներից մեկը: Սա այն բնութագրական գիծն է, որ տեսնում ենք կին

[20] Հանրային լսումների նպատակն է ապահովել շահագրգիռ հանրության մասնակցությունը ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) կամ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության գործընթացներում որոշումների ընդունմանը: Հանրային լսումները կազմակերպվում և իրականացվում են հանրային նշանակություն ունեցող շենքերում և տարածքներում: ՀՀ Կառավարության 19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն որոշում, Ընդհանուր դրույթներ, կետ 4, 6

բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության առանցքում: Այս խոսույթը ուղիղ կապ ունի նախորդ խոսույթի հետ, բայց այստեղ կինն ավելի խոցելի է դառնում: Եթե նախորդ խոսույթում մենք տեսնում ենք «կնոջը իր տեղը ցույց տալու» դրսևորումներ, ապա այստեղ ռազմավարական հաջորդ քայլն է գործի դրվում՝ թիրախավորել կանանց բարոյական կերպարը: Այն կերպարը, որը հասարակությունն ընդունում ու պարտադրում է, իսկ դրանից դուրս ցանկացած դրսևորում պարսավանքի ենթարկում: Սա նպատակ ունի շեղելու հանրության ուշադրությունը նրանց բուն գործունեությունից, արժեզրկելու նրանց՝ որպես «ճշմարտության կրողների», ապալեգիտիմացնելու նրանց հանրային մասնակցությունն ու ազդեցությունը:

Բնապահպան լրագրող Թեհմինե Ենոքյանը այս տեսանկյունից հաճախ թիրախավորված անձանցից է: Եվ բացառիկներից մեկը, որ հետևողական է եղել իրեն զրպարտողներին պատասխանատվության ենթարկելու հարցում:

«2018 թ. օգոստոսին ֆեյսբուք սոցիալական ցանցում Ամուլսարի շահագործման ջատագովությամբ զբաղվող մի օգտատեր՝ «Vahagn Hovhannisyan» անունով (այժմ արդեն ջնջված է), սկսեց տարածել իմ տունը, ինձ ու իմ տուն մտած անձանց պատկերող գաղտնիաբար արված լուսանկարներ՝ այնպիսի մեկնաբանություններով, որոնք փաստացի ոչ միայն վարկաբեկիչ էին, այլ ներխուժում էին իմ անձնական կյանք ու տարածք [….]: Լուսանկարներից մեկը պատկերում էր Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Արթուր Գրիգորյանի պետհամարանիշներով մեքենան իմ տան դիմաց, իսկ նա Ջերմուկ համայնքի հետ աշխատանքային խմբում նրանց ներգրավվածությունն ապահովելու նպատակով հուլիսի 17-ին եկել էր Գնդեվազ գյուղ, հետո՝ Ջերմուկ քաղաք, և համայնքի անդամների հետ հանդիպումներից մեկի համար ես տրամադրել էի իմ տան տարածքը: Գաղտնի արված լուսանկարի մեկնաբանությունները բոլորովին խեղաթյուրում էին իրականությունն ու վարկաբեկում ինձ»[21]:

Ուշագրավ է, որ այս գործի շրջանակում դրսևորվել է գենդերային ապատեղեկատվության դասական դեպք. Թեհմինե Ենոքյանի մասին զրպարտիչ տեղեկատվություն տարածողներից մեկը իր ցուցմունքում նշել է, որ նրա ու Արթուր Գրիգորյանի միջև կապի մասին տեղեկություններ է տարածել՝ նպատակ ունենալով ցույց տալու վերջինիս ոչ օբյեկտիվ լինելը Ամուլսարի հարցում: Այսինքն՝ նրանց գործունեությունը արժեզրկելու, նսեմացնելու համար կիրառվել է գենդերային ապատեղեկատվություն:

[21] Քրեական գործով պարզվել է, որ Լիդիան Արմենիայի աշխատակիցները զբաղվել են լրտեսությամբ և հանդես եկել կեղծ էջերով, https://armecofront.net/amulsar/lydian-fake/, հղումը՝ 10/12/2025

Ամուլսարի շուրջ ծավալվող իրադարձությունները ամենամեծ հնչեղությունն են ստացել՝ կենտրոնացնելով շահագրգիռ կողմերի ուշադրությունը ակտիվիստների վրա: Ակցիաների բնույթը, տևողությունն ու ձևաչափերը նոր ապատեղեկատվական խոսույթների առիթ են դարձել: Մասնավորապես՝ տղամարդկանց մասնակցությունը ակցիաներին՝ հատկապես տեղացիների, կին բնապահպանների մասին գենդերային ապատեղեկատվություն գեներացնելու հերթական պարարտ հողն էին: Հատկապես սոցիալական ցանցերում ստեղծված կեղծ օգտահաշիվների ու խմբերի շրջանակներում տարածվում էին տեղեկություններ, թե այնտեղ գտնվող կանայք սեռական հարաբերությունների մեջ են տղամարդկանց հետ: Այս մոտեցումը որոշ դեպքերում աջակցություն է ստացել այլ կեղծ և իրական օգտատերերի կողմից՝ սնելով նրանց հաստատման կողմնակալությունը («confirmation bias»)-ը:[22] Այս կամ այն պատճառով ձևավորված համոզմունքները բնապահպանների նկատմամբ սնվում է այսօրինակ լուրերով, վերջիններս էլ իրենց հերթին ամրապնդում են առկա համոզմունքները: Այսինքն՝ կրկին մի բարդ շղթայի հետ գործ ունենք, որի մի բաղադրիչը փոխադարձաբար սնում է մյուսին՝ դրանով իսկ բարդացնելով դրանց դեմ պայքարը:

> «Ինձ ասում էին՝ քո հետ ով պիտի ամուսնանա, ինչ ընտանիք գնաս կքանդես. գեշ ես, կեղտոտ ես, փչացած, քո նմանների պետք է վտարել»:
>
> Կին բնապահպան

Չնայած բնապահպանների նկատմամբ վիրավորական խոսքն ու հայհոյախոսությունը, հատկապես սոցիալական մեդիայում բնապահպանական ակցիաների ակտիվ փուլում, խիստ տարածված է, ընդ որում՝ և տղամարդկանց, և կանանց նկատմամբ, բայց հետազոտության մասնակիցները նշում են, որ նույնիսկ հայհոյախոսությունը էլի հատկապես կանանց է թիրախավորում:

> «Տղամարդուն նման հայհոյանքներ չէին տա, հենց կին լինելն են թիրախավորում»:
>
> Կին բնապահպան

Այս խոսույթի բնութագրական պատմույթներից է նաև կին բնապահպաններին սեքս աշխատողների հետ համեմատելը, վերջիններիս առնչվող բառաբանությունն ու սիմվոլիկան կին բնապահպանների վերաբերյալ

[22] Գոյություն ունեցող համոզմունքները պաշտպանելու համար անհատները հակված են փնտրելու պատճառներ, որ մերժեն կամ խուսափեն տեղեկատվությունից, որը հակասում է նախնական համոզմունքներին՝ միաժամանակ փնտրելով հուզական տեսանակյունից հանգստացնող ճշմարտություններ, որոնք հաստատում են իրենց համոզմունքները: The Disinformation Age, Steven Livingston, Cambridge University Press, 2020

կիրառելը: Ինչպես նաև կին ակտիվիստների գործողությունները «սեռական կյանքի բացակայությամբ պայմանավորելը», յուրաքանչյուր ակտիվություն որպես սեռական ակտ ակնարկ ընկալելը և/կամ ներկայացնելը:

> «Կանանց նկատելիորեն թիրախավորում են սեռական և անձնական կյանքի առումով՝ հիմնականում կեղծ: Նկարներ են դնում, նվաստացնող, վիրավորական խոսքեր»:
>
> Կին բնապահպան

> «Նման հասարակություններում կարծում են, որ բարոյական կերպար ունեցող կինը, որը ընտանիքի մայր է, հայեցի կին, չպետք է նման քննարկումների մասնակցի, ակտիվություն դրսևորի: Այն կինը, որը դուրս է գալիս այդ շրջանակից, կարող է թիրախավորվել ինչպես տղամարդկանց, այնպես էլ գյուղի կանանց կողմից: Հաճախ բամբասանքների, կեղծ լուրերի տեսքով»:
>
> Բնապահպանական հարցերով փորձագետ

> «Տարբեր բնապահպանների նկատմամբ տարբեր գործիքներ կան, կանանց նկատմամբ էլ բարոյական, սեքսիստական: Ընդհանուր բնապահպանական շարժմանն են ուզում վնաս հասցնել կանանց թիրախավորելու միջոցով»:
>
> Կին բնապահպան լրագրող

Ուշագրավ է, որ, ըստ հետազոտության մասնակիցների՝ այս միտումը տեսնում ենք նաև մեդիաբովանդակության մեջ, այդ թվում՝ ֆիլմերում:

> «Ֆիլմերում կին բնապահպաններին ներկայացնում են այն կողմից, որ արժեզրկեն նրանց գործը, արժեքները, և նրանց ներկայացնեն որպես անլուրջ կերպարներ»:
>
> Կին բնապահպան

Այս համատեքստում հանդիպում են նաև սպառնալից տոնով գրառումներ, օրինակ՝ «Քո պատմությունը բոլորն են իմանալու, սպասիր, կտեսնես»[23]: Իհարկե, սրանք, որպես կանոն, զուգորդվում են հայհոյախոսությամբ՝ կրկին հղում անելով «ոչ բարոյական» կերպարին, որոնք այս հետազոտության շրջանակում չենք վերարտադրի:

3) Արտաքին տեսքի թիրախավորում

Հանրային գործունեություն ծավալող կանանց դեպքում արտաքին տեսքի թիրախավորումը խիստ տարածված է: Կին բնապահպաններն այս դեպքում բացառություն չեն: Հետազոտությունը ցույց է տալիս, որ հենց այս ուղղությամբ էլ լինում է հիմնական թիրախավորումը: Այս երևույթը գործում է որպես մեխանիզմ բնապահպան կանանց գործունեությունը արժեզրկելու համար. արտաքինից «քխող» արհեստական «հիմնավորումներն» օգտագործվում են նրանց հեղինակությունը թուլացնելու, մասնագիտական գնահատականները չեզոքացնելու և հանրային ընկալումները խեղաթյուրելու նպատակով: Արդյունքում նրանց փորձագիտական ներդրումները երկրորդ պլան են մղվում, իսկ հանրային դիսկուրսում գերակա են դառնում ոչ էական, ոչ մասնագիտական դիտարկումները, որոնք չեն առնչվում իրական բնապահպանական օրակարգին, բայց զգալիորեն նվազեցնում են կանանց հավասար մասնակցության հնարավորությունները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնականում տրամաբանական սխալի մեթոդով են արվում արտաքին տեսքին առնչվող թիրախավորումները: Օրինակ՝ կարող են մեկնաբանություններ թողնել սոցիալական մեդիայում կին բնապահպանների վերաբերյալ գրառումների տակ հետևյալ բովանդակությամբ. «Քո տեսքից երևում ա, թե դու ով ես»: Կամ կրկին ուշադրությունը գործունեությունից շեղելու նպատակով սկսեն ուղղորդել կնոջը, որ փոխի իր արտաքին տեսքը, իրեն «կարգի բերի» և այլն. «Գնա լվացվի, հլը սրա կեղտոտ դեմքը»:

Հետաքրքիր է, որ այս գրառումները, վիզուալ մանիպուլյացիաները, որ արվում են կին բնապահպանների վերաբերյալ, իրենց հերթին մեկնաբանություններում գեներացնում են առհասարակ կանանց թիրախավորող, գենդերային հարցերն արժեզրկող, կարծրատիպեր վերարտադրող վնասակար խոսույթ: Այսինքն՝ կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվությունը մեկուսի չի հայտնվում և նպատակ չունի միայն կին բնապահպաններին թիրախավորելու, այլ նրանց միջոցով տարբեր խմբերում ներգրավված,

[23] Բոլոր մեջբերումներն արված են առցանց հարթակներում շրջառված բովանդակությունից՝ առանց փոփոխությունների: Աղբյուրներին ուղիղ հղում չի տրվում՝ անանունությունը պահպանելու նպատակով: Ավելին ներկայացված է Սահմանափակումներ բաժնում:

հանրային կամ ոչ հանրային գործունեություն ծավալող կանանց, այդ թվում՝ թիրախավորելով որոշ մասնագիտությունների տեր կանանց:

Այնուամենայնիվ անհրաժեշտ է ընդգծել, որ այս երևույթը հատկապես բնութագրական է առավել մեծ հանրային տեսանելիություն ունեցող կին բնապահպաններին: Իսկ փոքր համայքներում հիմնականում տեղացի կանանց կողմից նախաձեռնվող գործողություններն ավելի քիչ հանրային ուշադրություն են գրավում, որից էլ հետևում է ավելի քիչ բացասական խոսույթի գեներացումը հատկապես առցանց հարթակներում, որոնք առավել մեծ կշիռ ունեն կանանց թիրախավորող խոսույթի տարածման գործում: Այս տեսանկյունից խիստ տարբերվող պատկեր ենք տեսնում փոքր համայքներում. այդ առանձնահատկությունների վերաբերյալ մեր դիտարկումները կներկայացնենք առանձին գլխով:

Ինչպես ցույց է տալիս այս գլխում ներկայացված վերլուծությունը, կին բնապահպանների նկատմամբ ուղղված գենդերային ապատեղեկատվությունը ոչ միայն տարածված, այլև համակարգված բնույթ ունեցող երևույթ է, որը ձևավորվում և վերարտադրվում է միևնույն տրամաբանությամբ՝ անկախ կոնկրետ թեմայից կամ իրավիճակից: Այն գործում է որպես հանրային դաշտից կանանց դուրս մղելու, նրանց ազդեցությունը սահմանափակելու և մասնագիտական հեղինակությունը խաթարելու գործիք՝ փոխարինելով բովանդակային քննարկումը խտրական խոսույթով:

Բացահայտված 3 հիմնական խոսույթները՝ կանանց սոցիալական դերերի պարտադրումը, բարոյական կերպարի թիրախավորումը և արտաքին տեսքի արժեզրկումը, փոխկապակցված են և հաճախ գործարկվում են հաջորդական կամ զուգահեռ ձևով: Երբ կնոջ մասնակցությունը կասկածի տակ դնելը կամ «իր տեղը ցույց տալը» բավարար չէ, կիրառվում են ավելի ագրեսիվ մեթոդներ՝ ուղղված նրա հեղինակությանը, վստահելիությանը և հանրային ընկալմանը: Այս խոսույթները ոչ միայն թիրախավորում են կոնկրետ կանանց, այլ նաև ազդակ են ծառայում այլ կանանց համար՝ կանխարգելիչ ազդեցություն ունենալով նրանց հանրային ներգրավվածության վրա:

Գենդերային ապատեղեկատվության տարածման մեխանիզմները բազմաշերտ են և ներառում են թե՛ շահագրգիռ դերակատարների նպատակային գործողությունները, թե՛ հասարակական կարծրատիպերով առաջնորդվող օգտատերերի ակտիվ մասնակցությունը: Սոցիալական մեդիան այս համատեքստում հանդես է գալիս ոչ միայն որպես հաղորդակցության հարթակ, այլ նաև որպես միջավայր, որտեղ գենդերային խտրական խոսույթները արագ են տարածվում, ամրապնդվում և ստանում նոր ձևեր:

Արդյունքում կին բնապահպանների հանրային գործունեությունը տեղի է ունենում անհավասար պայմաններում, որտեղ նրանց մասնագիտական կարողությունները և փաստարկները հաճախ երկրորդական են դառնում գենդերային ինքնության համատեքստում: Այս իրավիճակը բացահայտում է ոչ միայն գենդերային ապատեղեկատվության վտանգները, այլև դրա խորքային ազդեցությունը հանրային քննարկումների որակի, մասնակցային գործընթացների ներառականության և ժողովրդավարական մշակույթի վրա: Այս գլուխը հիմք է ստեղծում հետագա քննարկումների համար՝ ընդգծելով, որ գենդերային ապատեղեկատվության դեմ պայքարը պահանջում է համակարգային, ինստիտուցիոնալ և հասարակական համադրած մոտեցումներ:

2. Կին բնապահպանների արձագանքը իրենց և այլ բնապահպան կանանց մասին գենդերային ապատեղեկատվության դեպքերին

Այն, որ կին բնապահպանների նկատմամբ գենդերային ապատեղեկատվությունը որպես կանոն համակարգված բնույթ ունի, և տարբեր փուլերում տարբեր շահագրգիռ կողմեր են ներգրավվում այդ քննարկումներում, ներկայացրինք նախորդ գլխում: Այս գլխում կքննարկենք, թե սովորաբար ինչպես են արձագանքում կին բնապահպանները իրենց ուղղված թիրախավորումներին, և թե ինչպես են այլ կին բնապահպաններ դիրքավորվում, երբ իրենց գործընկերները թիրախում են:

> «Բոլոր դեպքերում մարդը ապրում է իր պատիվն ու արժանապատվությունն պահպանելու համար, կնոջ համար շատ ցավալի է, որ անվան հետ խաղում են, մանավանդ, որ ոչ մի հիմք չկա դրա համար»:
>
> Կին բնապահպան

Ինչքան էլ կին բնապահպանների համար կարևոր է լինել «առաջնագծում», երբ իրենց կարիքը կա, երբ վտանգված են իրենց համար կարևոր արժեքներ, այնուամենայնիվ, կարիք կա ունենալու դիմակայունության որոշակի մեխանիզմներ: Դրանք ձևավորվում են նաև փորձառությանը զուգահեռ: Ինչպես նշում են հետազոտության մասնակիցները, որպես բնապահպան՝ իրենց գործունեության սկզբնական շրջանում ավելի դժվար էին կողմնորոշվում, թե ինչպես արձագանքել թիրախավորումներին՝ անտեսել, թե ոչ, արդյոք պետք է հետևել մեկնաբանություններին, գրառումները անել հանրային, թե ավելի ուշադիր լինել հանրային դաշտում:

Եթե կին բնապահպանների՝ իրենց թիրախավորումների դեպքերին արձագանքները ներկայացնենք՝ ըստ դրանց դրսևորման ձևերի, կունենանք հետևյալ խմբերը.

1) Վերաբերմունքի փոփոխություն

2) Վարքի փոփոխություն

3) Կյանքի որակի փոփոխություն

Առաջին երկուսը կքննարկենք այս գլխի շրջանակում, իսկ երրորդին կանդրադառնանք հաջորդ գլխում՝ կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության և նրանց հանրային գործունեությունը շարունակելու որոշումների միջև փոխառնչությունը դիտարկելիս:

1) Վերաբերմունքի փոփոխություն

Այս համատեքստում հետազոտության մասնակիցները նշում են, որ եթե նախկինում շատ զգայուն էին այս թեմաների նկատմամբ, ապա ժամանակի ընթացքում սկսել են ավելի պակաս զգայուն լինել: Հիմնականում դա դրսևորվում է իրենց թիրախավորողների ստեղծած բովանդակությունը մտքում արժեզրկելով.

«Ցինիկ ձևով եմ նայում, որ հաղթահարեմ»:

Կին բնապահպան

Որոշ ակտիվիստների դեպքում կրած անհարմարությունները պայքարի նպատակների հետ համեմատության մեջ դիտարկելն է դիմակայունության մեխանիզմը:

«Ճիշտ է՝ տհաճ է, բայց միաժամանակ մտածում եմ, որ իրենք ինչքան թույլ են, որ էս ճանապարհով են գնում»:

Կին բնապահպան

«Պատրաստ ենք նաև նման բաների միջով անցնել, քանի որ մեր առողջությունն է սեղանին դրված»:

Կին բնապահպան

Այսպիսով՝ գենդերային թիրախավորումն ու դրա տարբեր դրսևորումները, չնայած դրանց համակարգված լինելուն և բացասական ազդեցությանը՝ ժամանակի ընթացքում ձևավորում են նաև դիմակայունության որոշակի մեխանիզմներ կին բնապահպանների շրջանում: Հետազոտության մասնակիցների փորձը ցույց է տալիս, որ թիրախավորումների նկատմամբ ի սկզբանե ունեցած բարձր զգայունությունը աստիճանաբար փոխարինվում է թիրախավորող բովանդակության գիտակցված արժեզրկմամբ կամ այն ավելի լայն պայքարի նպատակների համատեքստում դիտարկելով: Այլ կերպ ասած՝ անհատական անհարմարությունները երկրորդական են դառնում բնապահպանական պայքարի նշանակության համեմատությամբ, ինչը թույլ է տալիս պահպանել ներգրավվածությունը և շարունակել գործունեությունը՝ չեզոքացնելով գենդերային ապատեղեկատվության որոշակի ազդեցություն:

2) Վարքի փոփոխություն

Բացի վերաբերմունքի փոփոխությունից՝ կին բնապահպանները նշում են նաև որոշ վարքաձևեր, որոնք օգնում են դիմակայել թիրախավորումներին:

Որոշ դեպքերում դա դրսևորվում է որոշ գործողություններից զերծ մնալով, օրինակ՝ սահմանափակելով ընկերների շրջանակը կամ սոցիալական մեդիայում տեսանելիությունը:

> «Այն մարդիկ, ովքեր նախկինում իմ շրջապատում էին, բայց հավատացել էին իմ մասին բացասական լուրերին, ուղղակի հեռացրել եմ իմ շրջապատից»:
>
> Կին բնապահպան
>
> «Հիմա ուղղակի փակել եմ մեկնաբանությունների դաշտը ոչ ընկերներիս համար»:
>
> Կին բնապահպան

Որոշ դեպքերում դա դրսևորվում է գործողություններ ձեռնարկելով, հակահարված տալով, որի արդյունքում նաև աջակիցներ են համախմբվում նրանց շուրջ:

> «Դեմքերով /նկատի ունի՝ առցանց հարթակում թիրախավորող անձանց օգտահաշիվները/ հանրայնացնում էի նրանց գրածները»:
>
> Կին բնապահպան

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կին բնապահպանների դիմակայունությունը ձևավորվում է ոչ միայն վերաբերմունքի փոփոխության, այլև կոնկրետ վարքաձևերի միջոցով: Հետազոտության մասնակիցների փորձը ցույց է տալիս, որ թիրախավորումներին արձագանքելու ռազմավարությունները տատանվում են՝ սկսած որոշակի ինքնասահմանափակումներից, ինչպիսին են սոցիալական մեդիայում տեսանելիության կամ սոցիալական շփումների կրճատումը, մինչև ակտիվ հակազդեցություն և նախաձեռնողական քայլեր: Վերջին դեպքում թիրախավորումներին հակահարված տալը ոչ միայն նվազեցնում է դրանց ազդեցությունը, այլև նպաստում է համախոհների և աջակիցների ձևավորմանը՝ ամրապնդելով կանանց դիրքերը հանրային դաշտում:

3. Գենդերային ապատեղեկատվության փոխանցությունը կին բնապահպանների կյանքի որակի ու որոշումների հետ. փորձառություն և փորձագիտական հայացք

ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի նախկին գործակալ Ջո Նավարոն իր «Ես կարդում եմ ձեր մտքերը» գրքում, խոսելով վտանգին մարդու արձագանքի մասին, հղում է տալիս հայտնի փաստին՝ վտանգի հանդիպելիս անշարժանալու կամ անհետանալու երևույթին՝ որպես երկու ամենագործուն պաշտպանիչ միջոցներ:[24] Սրանց զուգահեռ՝ Ջո Նավարոն նշում է նաև երրորդ՝ «առերեսվելու» արձագանքը:

Ինչու ենք սա քննարկում կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության և դրա հետևանքների համատեքստում: Վերը նշված երեք դրսևորումներին էլ հանդիպեցինք նախորդած գլուխներում՝ անդրադառնալով երևույթին տարբեր կողմերից: Եթե վերադառնանք գենդերային ապատեղեկատվության և հետագա որոշումների փոխանցություններին, ապա կտեսնենք, որ կին բնապահպանները որոշել են այդ ճանապարհն անցնել վտանգի հետ զուգահեռ, վազել վտանգի կողքին, ոչ թե փախչել, խուսափել կամ ընդդիմանալ: Դա ինչ-որ չափով նրանց համար նորմալացվել է և համարվում է մի բան, որ մշտապես ուղեկցելու է կին բնապահպաններին:

> «Մենք գտնվում ենք պայքարի մեջ, որտեղ կան հակադիր կողմեր, կարող են որոշակի կոշտություններ լինել: Պարզ է, որ եթե հանրային ես, կլինի նաև քննադատություն:
>
> Մենք ապրում ենք պատրիարխալ իրականության մեջ, մեր պայքարն ի սզբանե եղել է դա փոխելու համար: Մենք հենց դրա դեմ ենք պայքարում, ոնց կարող են գենդերային ապատեղեկատվությամբ լուսաբանել»:
>
> Կին բնապահպան լրագրող

Բայց ինչ գնով է այն տրվում, կքննարկենք այս գլխում:

Այսպես՝ երբ խոսում ենք կին բնապահպանների հետ, նրանք, իհարկե, հիշատակում են թիրախավորման տարբեր դրսևորումներ՝ առցանց ատելության խոսքից մինչև գենդերային ապատեղեկատվություն, հայհոյախոսությունից մինչև դատական գործեր, բայց ավելի քիչ են հակված խոսելու դրանց պատճառով առաջացած խնդիրներից ու անհարմարություններից: Գիտակցելով, որ, ինչպես նրանք են նշում՝

[24] Ես կարդում եմ ձեր մտքերը, Ջո Նավարո, Նոր գրախանութ ՍՊԸ, Երևան, 2022

«Հարձակումները մեզ ու մեր գործը դելեգիտիմացնելու, արժեզրկելու նպատակ ունեն», կին բնապահպանները փորձում են տուրբ չտալ դրանց, մնալ կանգուն, իրենց տեղում, հաստատակամ ու իրենց արժեքներին հանձնառու: Այստեղ հակադրության մեջ են հայտնվում անհատն ու ակտիվիստը: Մի կողմից ամեն ինչ արվում է, որ անձնական պատճառներով շարժումը չտուժի, մյուս կողմից՝ տուժում է անհատը:

«Հուզական այրում ունեմ ու չեմ կարողանում վերականգնվել, բայց չենք բարձրաձայնում, որ շարունակենք ուժեղ երևալ: Ամեն դեպքում՝ ընդհանուր առմամբ դա կայուն սթրես է. հանգստանալու ժամանակ չունենինք, ու դա ամեն դեպքում ազդում է: Ամեն ինչ իրար հետ կոմպլեքս բեզ ուղղակի քամում է»:

Կին բնապահպան

«Միանշանակ խանգարել է ու հոգնեցուցիչ է՝ համ ֆիզիկապես, համ մտավոր»:

Կին բնապահպան

Հետազոտության մասնակիցները նշում են, որ գիտակցաբար են ստանձնել այս գործը և դրանից բխող անհարմարությունները: Եվ դրանով պայմանավորված՝ չեն նահանջում, երբ դժվարությունների են հանդիպում, այնուամենայնիվ դա նրանց կյանքի վրա զգալի ազդեցություն է ունենում:

«Հարձակումները մեզ դելեգիտիմացնելու, արժեզրկելու նպատակ ունեն: Ներքին ռեսուրսների հաշվին շարունակում ենք գործունեությունը, բայց դա մեր առողջության ու հոգեկան կայունության հաշվին է»:

Կին բնապահպան

«Իրենց մեջ վախ կա, որ ֆեյքերով են անում, ասելիք չունեն, թույլ են, վախենում են ու դրանով ավելի են կարևորում մեր աշխատանքը»:

Կին բնապահպան

Այս համատեքստում հետազոտության մասնակիցները կարևորում են նաև ընտանիքի, ընկերների, շրջապատի վերաբերմունքը:

«Միշտ մտածում եմ՝ ինչպես կարձագանքի ընտանիքս: Ընտանիքի ոչ բոլոր անդամներն են աջակցում»:

Կին բնապահպան

Երբ հարցը վերաբերում է դիմակայությանն ու վերականգնմանը, հետազոտության մասնակիցները նշում են, որ որոշ հնարքներ որդեգրել են իրենց համար և փորձում են հետևել դրան. հաճախ օգնում է մյուսների հետ կիսվելը, որովհետև, ինչպես իրենք են նշում, թիրախավորումների բնույթը գրեթե նույնն է բոլորի դեպքում, և պետք է նույնքան համակարգված արձագանքել, կիրառել արդեն փորձարկված տարբերակներ, ինչպես նաև լսել իրար ու ապրումակցել:

> «Ցնցած դա եղել է իմ հանգստի, առողջության, կարիերայի հաշվին, ամենաարժեքավորը, որ ձեռք եմ բերել այդ գործընթացներում, մարդիկ են: Ես ընկերացել եմ այլ գյուղերում ապրող բնապահպան կանանց հետ: Դժվարությունները մեզ ավելի կոփեցին, ու մարդկային կողմից մենք հարստացանք իրարով, համայնք ձևավորեցինք»:
>
> Կին բնապահպան

Կոլեկտիվ ջանքերը օգտակար են համարում նաև հետազոտության այլ մասնակիցներ՝ նշելով.

> «Փոքրիկ արդյունքներն էլ, որ ունենում ենք, ոգեշնչում են մեզ»; «Իմ թիմն է օգնում, որ ես շարունակեմ աշխատել, ինձ ոգևորում ու ուժ են տալիս»:

Նշում են նաև անհատական լուծումներ, որ յուրաքանչյուրն իր համար է բացահայտել և կիրառում է:

> «Մի քիչ ժամանակ եմ վերցրել, որ զբաղվեմ ինձնով, որովհետև դրանից առաջ ընդհանրապես ժամանակ չէի ունենում ինձ համար»:
>
> Կին բնապահպան
>
> «Ավելի շատ խմբակային, թիմային քննարկումներ ենք անում. ձեռագիրը նույնն է, բոլորը սովոր են արդեն ու կիսվում են իրենց փորձով: Միամտություն կլինի խմբային թիրախավորումներին մենակ դիմադրել: Կարևոր է նաև ավելի մեծ համայնքի, քաղաքացիական հասարակության աջակցությունը»:
>
> Կին բնապահպան

Բնապահպան Անիա Շահնազարյանը «Կանանց հարթակ» փոդքասթում ևս այս հարցին անդրադառնալիս նշում է.

> «Շատ կարևոր է եղել մեզ համար այս տարիներին կոլեկտիվ մնալը, իրար հետ համերաշխություն ունենալը, համերաշխության ցանցեր ստեղծելը»:

Այն, թե ինչպես են պայմանավորում գենդերային ապատեղեկատվությունն ու կանանց թիրախավորելու այլ դրսևորումները, կին բնապահպանները մեկնաբանում են այսպես.

> «Ճնշման մեթոդներ են, բերում եմ բացասական տրամադրվածության: Ավելի շրջահայաց ու զգույշ եմ դարձել, ինքնագրաքննությունը աշխատում է ամեն դեպքում՝ ավելորդ անգամ թիրախում չհայտնվելու համար»:
>
> Կին բնապահպան

> «Արդեն ոչ ոք չի լսում նրանց, դրա համար չի խանգարում մեր գործունեությանը: Մեր գործունեության վրա ազդեցություն երևի ունենում է, բայց մենք շարունակում ենք, գիտենք, որ մենք ճիշտ ենք, մենք չենք խախտում օրենքները»:
>
> Բնապահպանական հարցերով փորձագետ

Արժեքներին հավատարիմ մնալուն ու ստանձնած գործին հանձնառու լինելուն զուգահեռ՝ հետազոտության մասնակիցներն ամեն դեպքում հիշատակում են (ինքնա)սահմանափակման որոշ դրսևորումներ, ինչպիսին վերը հիշատակված ինքնագրաքննությունն է: Սա հատկապես մեկնաբանվում է նրանով, որ ստիպված չլինեն ռեսուրսները ծախսել այլ ուղղությամբ, մինչդեռ կարող էին դրանք ուղղորդել բնապահպանական ակտիվությանը և ինչու ոչ՝ խնայել հոգեկան ու ֆիզիկական առողջությունը:

> «Եթե խոսքը լիդեր, ճանաչված բնապահպանների մասին է, հիմնականում շարունակում են գործունեությունը: Իհարկե, կան Հայաստանում մարդիկ, որոնք ոչ թե ընկճվել են, այլ այդ ամեն ինչից հոգնել և հյուծվել են: Երևի մտածում են՝ համայնքային մակարդակում ավելի հեշտ է կանանց կոտրել, բայց վերջին տարիներին մենք տենդենց ենք տեսնում, որ իրենք ավելի են ուժեղանում, ավելի շատանում են կին բնապահպանները: Դա տարիների աշխատանքի արդյունք է՝

> իրազեկելու և հաջողության պատմությունները տեսանելի դարձնելու»:
>
> Բնապահպանական հարցերով փորձագետ

Կարևոր է հիշատակել նաև այն կին բնապահպանների կարծիքները, որոնք ավելի շատ ներգրավված են համայնքային բնապահպանական հարցերում և, ինչպես արդեն նշել ենք, ավելի քիչ են ենթարկվում թիրախավորումների, հատկապես առցանց հարթակում: Այնուամենայնիվ, այն, ինչ կատարվում է ավելի հանրային գործունեություն ծավալող կին բնապահպանների հետ՝ թիրախավորումների տեսանկյունից, մտահոգում ու սահմանափակում է նաև համայնքներում գործող կին բնապահպաններին: Ինչպես նրանցից մեկն է նշել.

> «Կանայք իմ խոցելի տեղն են: Ես վատ եմ տանում դա, որ այլ բնապահպան կանանց թիրախավորում են: Ֆեյքերով նկարները դնում ու սկսում են վիրավորել: Փորձում են ազդել կանանց հոգեբանության վրա, որ դադարեցնեն իրենց գործունեությունը»:

Այսպիսով՝ գենդերային ապատեղեկատվությունը կին բնապահպանների համար ոչ միայն որպես արտաքին ճնշման ձև է, այլ նաև գործոն, որը երկարաժամկետ ազդեցություն է ունենում նրանց կյանքի որակի, դիմակայության ռեսուրսների և որոշումների վրա: Թիրախավորումները հաճախ ընկալվում են որպես գործունեության «ուղեկցող ռիսկ», ինչի արդյունքում ձևավորվում է ինքնասահմանափակման միտում: Սա թույլ է տալիս պահպանել շարժման շարունակականությունը, սակայն միաժամանակ անհատական մակարդակում բերում է հոգեկան և ֆիզիկական ծանրաբեռնվածության ու գերլարման:

Միևնույն ժամանակ, այս փորձառությունը ցույց է տալիս կոլեկտիվ դիմակայության կարևորությունը. համերաշխության ցանցերը, թիմային աջակցությունը և փորձի փոխանակումը դառնում են ոչ միայն պաշտպանության, այլ նաև կայունության պահպանման հիմնական մեխանիզմներ: Այս համատեքստում գենդերային ապատեղեկատվության խնդիրը պետք է դիտարկել ոչ միայն որպես հանրային գործունեությունը դադարեցնելու կամ սահմանափակելու ռիսկ, այլ նաև կյանքի որակի վրա ազդող լուրջ գործոն, որն էլ իր հերթին կարող է բերել հանրային գործունեության ժամանակավոր կամ մշտական դադարեցման:

4. Գենդերային ապատեղեկատվության «զսպօղակները». հետազոտական հայացք

Ինչպես արդեն նշեցինք նախորդ գլուխներում, գենդերային ապատեղեկատվության և առհասարակ գենդերի հիմքով կանանց թիրախավորումների դրսևորումներին հիմնականում առնչվում են ավելի տեսանելի, համահայաստանյան ակցիաների մասնակիցները, որոնք նաև ակցիաներից դուրս շարունակում են տեսանելի մնալ՝ հարցազրույցների ու ֆեյսբուքյան գրառումների մասնակցել, այդ թվում՝ աջակցել բնապահպանական գործողություններին փոքր համայնքներում: Դրանով պայմանավորված՝ առաջին հայացքից կարող է թվալ, թե ավելի փոքր համայնքներում բնապահպանական գործողություններ ձեռնարկող կանայք զերծ են գենդերային ապատեղեկատվության միջոցով թիրախավորումից: Սակայն ինչքան էլ որ գենդերային ապատեղեկատվությունը ուղիղ կապ ունի տեսանելիության հետ, հատկապես սոցիալական ցանցերում դա չի ապահովագրում նրանց թիրախավորումից:

Հետազոտության մասնակից բնապահպան փորձագետներից մեկը նշում է.

> «Համայնքային մակարդակում կին բնապահպանները թիրախավորվում են առաջին հերթին քաղաքացիական ակտիվության համար՝ տարբեր կարծրատիպերի պատճառով: Կան համայնքներ, որ այդպիսի ակտիվությունը կարող են ասոցացնել անբարոյականության, գործ տալու հետ: Երբեմն պիտակավորվում են որպես ինչ-որ տոհմի, ցեղի անհաջող ներկայացուցիչ»:

Բնապահպան փորձագետը հավելում է, որ.

> «Համայնքի ներկայացուցիչ կանանց նկատմամբ կարող է ավելի ուժգին դրսևորվել [գենդերային ապատեղեկատվությունը], բայց դրսից եկած բնապահպան կանանց էլ կարող են թիրախավորել արտաքին տեսքի, խոսելու ձևի մասով»:

Չնայած սրան՝ իրենք՝ համայնքներում ակտիվ կին բնապահպանները, այլ կերպ են ընկալում իրականությունը: Երբ խոսում ենք այդ կանանց հետ և հարցնում՝ արդյոք իրենց մասին կին լինելը թիրախավորելու միջոցով բացասական լուրեր, բամբասանքներ տարածվել են, նրանք միանգամից հերքում են, բայց նաև մեկնաբանում: Պատմում են, որ շատ դժվար է իրենց մասին բամբասանք տարածել, թիրախավորել որպես կին, որովհետև ողջ գյուղն իրենց ճանաչում է. գիտեն՝ ում թոռն են, ում դուստրը, ում մայրը կամ կինը:

Սա կարծես երաշխավորում է գենդերային ապատեղեկատվությունից զերծ մնալը: Սակայն, արդյո՞ք դրական միտումների մասին է խոսում:

Սրան գալիս են լրացնելու նաև հանրային միջոցառումների ժամանակ կանանց ներկայության՝ զսպող, լարվածությունը թուլացնող նշանակության մասին հետազոտության մասնակիցների պնդումները: Ինչպես նախորդիվ նշել ենք, այս՝ առաջին հայացքից դրական թվացող ազդեցությունը կրկին կանանց «տեղավորում է» հասարակական նորմերի շրջանակում՝ մի կողմից տղամարդկանց աչքերում, մյուս կողմից՝ հենց իրենց՝ կին բնապահպանների աչքերում:
Հետազոտության մասնակիցներից մեկը, պատմելով որպես բնապահպան ակտիվիստ իր փորձառության մասին, նշել է, որ գյուղում կանանց շրջանում ձևավորված կարծրատիպ կար, որ իրենց տղամարդիկ թույլ չեն տա մասնակցել ակցիաների: Սակայն պարզվել է, որ այդ կանայք նույնիսկ չէին հարցրել, ուղղակի համոզմունք ունեին: Նրանց խոսքով՝ համայնքներում կանանց նկատմամբ ճնշումներն ավելի շատ դրսևորվում են ընտանիքի անդամ տղամարդկանց միջոցով ճնշումներ գործադրելով, որ զերծ մնան ակտիվությունից:

Հասարակական նորմերն իրոք մեծ ազդեցություն ունեն կին բնապահպանների թիրախավորելու կամ չթիրախավորելու հարցում:
«Փոքր համայնքներում պատժիչ միջոցների կարիք կամ չկա, կամ էլ շատ քիչ կա: Լավ վարքը մեծապես սովորույթի արդյունք է, վաղ մանկությունից անհատին որոշակի պայմաններում դաստիրակելու հետևանք»[25]: Կոնֆլիկտների հետազոտության համատեքստում արված այս դիտարկումը սահուն կապվում է նաև գենդերային ապատեղեկատվության տարածման հետ: Հայրիշխանական, կարծրատիպային համայնքներում կանայք որպես կանոն արդեն իսկ իրենց պահում են այնպես, որ հանկարծ ասեկոսեի տեղիք չտան: Ինչ-որ մեկի թոռը, դուստրը, կինը, քույրը լինելը ծառայում է որպես յուրահատուկ հասարակական զսպողակ՝ խուսափելու ինքնարտահայտվելուց, որը թիրախավորման ռիսկ է պարունակում: Սա դրսևորվում է ինքնագրաքննությամբ, ինքնազսպմամբ և մշակութային կանոններին հարմարեցմամբ:

Փաստորեն այն, որ փոքր համայնքներում դժվար է գենդերային ապատեղեկատվություն տարածել և դրանով թիրախավորել կանանց, իրոք այդպես է: Բայց դա ամենևին նրա մասին չէ, որ հասարակությունը առողջ ձևով է ընկալում կանանց ակտիվությունը: Իրականում յուրաքանչյուր կին գծել է իր՝ ակտիվ լինելու սահմանները, բայց միևնույն ժամանակ՝ հասարակական նորմերի շրջանակում մնալու, որովհետև թիրախում հայտնվելու են ոչ միայն իրենք, այլ նաև՝ իրենց հետ կապ ունեցող այլ մարդիկ, հատկապես՝ տղամարդիկ: Իսկ դա անընդունելի վարք կդիտարկվի համայնքում:

[25] Anthropology and the study of conflict: An introduction, Robert A. Levine, Journal of Conflict Resolution, 5(1), 1961, 3-15

Եզրակացություններ

Գենդերային ապատեղեկատվությունը շարունակում է կիրառվել որպես գործուն մեխանիզմ՝ հանրային ակտիվություն ունեցող կանանց լռեցնելու, նրանց ռեսուրսները այլ ուղղությամբ ուղղորդելու, նրանց գործունեության բուն թեմայից ուշադրությունը շեղելու համար:

Կին բնապահպանների դեպքում հիմնականում կիրառվում են հետևյալ մեխանիզմները.

1) Համատեքստից կտրված պատկերների և տեղեկությունների հրապարակում

2) Կեղծ օգտահաշիվների և մոլորեցնող անուններով խմբերի ստեղծում

3) Հայտարարություններ՝ բնապահպանական ակցիաների և միջոցառումների ժամանակ

4) Այլաբանական, երկիմաստ բառաբանության կիրառում

5) Անտրամաբանական կապեր տեսնելը

Կին բնապահպանների վերաբերյալ գենդերային ապատեղեկատվության գերակա խոսույթներն են.

- Քաղաքական մտաշահարկման նպատակով իրականացվող խոսույթ
- Կնոջը սեռականացնող, ապրանքայնացնող և առարկայնացնող խոսույթ

Այս խոսույթների ներքո տեսնում ենք հետևյալ երեք պատմույթները.

- Կանանց վերագրվող և պարտադրվող սոցիալական դերեր
- Կանանց բարոյական կերպարի թիրախավորում
- Արտաքին տեսքի թիրախավորում

Կին բնապահպանները գենդերային ապատեղեկատվությանն արձագանքում են հիմնականում վերաբերմունքի փոփոխությամբ, երբ փորձում են իրենց մտքում արժեզրկել երևույթը, և վարքի փոփոխությամբ, երբ փորձում են սահմանափակել որոշ գործողություններ, ինքնագրաքննել՝ թիրախավորումներից խուսափելու համար:
Ամենակարևոր փոփոխությունը, որ տեղի է ունենում բնապահպան կանանց համար, կյանքի որակի փոփոխությունն է: Չնայած փորձում են շարունակել գործել, «թույլ չերևալ», սակայն փոխվում է կյանքի որակը, ներառյալ՝ մշտական սթրեսն ու գերհոգնածությունը:
Ուշագրավ բացահայտում էին փոքր համայնքներում գործող կին բնապահպանների ինքնագրաքննության դրսևորումները: Համայնքներում գործում են գենդերային ապատեղեկատվության յուրատեսակ «զսպողակներ»՝ թելադրված հասարակական նորմերով: Սա կանանց ստիպում է գծել իրենց ակտիվության սահմանները, որից դուրս գալով կարող են հայտնվել թիրախում, ինչի ազդեցությունը կկրեն ոչ միայն իրենք, այլև ընտանիքի անդամները, հատկապես՝ տղամարդիկ:

Այնուամենայնիվ, կին բնապահպանները գտել են դիմակայունության իրենց մեխանիզմները. անհատական գործողություններին զուգահեռ՝ նրանք կարևորում են կոլեկտիվ ջանքերը, համերաշխությունը, միմյանց հետ փորձով կիսվելը:

Օգտագործված ռեսուրսներ

1. Արդյունավետ լուսաբանում: Գենդերային ապատեղեկատվության դեմ պայքարի ուղեցույց, Institute for War & Peace Reporting – IWPR, 2024
2. The Disinformation Age, Steven Livingston, Cambridge University Press, 2020
3. The Handbook of Social Psychology, D. T. Gilbert, S. T. Fiske & G. Lindzey, Boston: McGraw-Hill, 1998
4. Social Norms, Michael Hechter and Karl-Dieter Opp, The Russell Sage Foundation, 2001
5. Negotiating Gendered Discourses: Michelle Bachelet and Cristina Fernández De Kirchner, Latin American Gender and Sexualities, 2016
6. Discourse and Social Change, Norman Fairclough, Cambridge: Polity Press, 1992
7. Security, Disinformation and Harmful Narratives: RT and Sputnik News Coverage about Sweden, Maria Hellman, The Palgrave Macmillan Series in International Political Communication, 2024
8. Գենդերային ապատեղեկատվությունը հայաստանյան լրատվամիջոցներում, Կոջոյան Ա., Հովհաննիսյան Լ., ARTEMIS Alliance, ՕԽԵՋԵՆ հիմնադրամ, Երևան, 2024
9. Կանանց թիրախավորող առցանց ատելության խոսքը հայաստանում, Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամ, Գյումրի, 2024
10. Կովկասյան բարոմետր, 2024, https://caucasusbarometer.org/am/cb2024am/TRUMEDI/
11. Ի՞նչ անել, երբ հին ակտիվիզմը չի աշխատում. ռադիկալացնել ժողովրդավարությունը, «Սոցիոսկոպ» ՀԿ, Երևան, 2025
12. Հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերը Հայաստանում. Մարդու իրավունքների տուն, Երևան, 2024
13. (Չ)լռեցնելով շարժումը / Silencing a Movement, https://youtu.be/ays_nghWRwU
14. Research Design Qualitative, Quantitative, and Mixed Methods Approaches, Fifth Edition, John W. Creswell, J. David Creswell, SAGE Publications, London, 2018
15. Հանֆահեննների ֆեյֆ էջերը, https://www.facebook.com/watch/?v=2305232073040414&t=4
16. Քննադատական մտածողության և մեդիագրագիտության դասընթացներ. Հավելյալ ուսումնա-մեթոդական նյութեր, Պրակ առաջին, Տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, https://epfarmenia.am/sites/default/files/inline-files/Critical_Thinking_Manual_Part_1_EPF_31July2018.pdf
17. Կանանց հարթակ #15 Աննա Շահնազարյան | Թեմինե Ենոքյան, Բուն ԹՎ, https://youtu.be/fktAa-rTrVA
18. Social Norms, Michael Hechter and Karl-Dieter, Russel Sage Foundation, New York, 2001
19. ՀՀ Կառավարության 19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն որոշում, Ընդհանուր դրույթներ, կետ 4, 6
20. Քրեական գործով պարզվել է, որ Լիդիան Արմենիայի աշխատակիցները զբաղվել են լրտեսությամբ և հանդես եկել կեղծ էջերով, https://armecofront.net/amulsar/lydian-fake/
21. The Disinformation Age, Steven Livingston, Cambridge University Press, 2020
22. Ես կարդում եմ ձեր մտքերը, Ջո Նավարո, Նոր գրախանութ ՍՊԸ, Երևան, 2022
23. Anthropology and the study of conflict: An introduction, Robert A. Levine, Journal of Conflict Resolution, 5(1), 1961

Հավելվածներ

Հավելված **1**

Խորին հարցազրույցի հարցաշար

1. Խնդրում եմ պատմել ձեր բնապահպանական գործունեության մասին. երբվանի՞ց եք այս ոլորտում, ո՞ր ակցիաներին եք մասնակցել, եթե հնարավոր է՝ նշեք հստակ ժամանակահատվածներով:
2. Որպես բնապահպան ակտիվիստ հաճա՞խ եք թիրախավորվել: Եթե այո, ինչպե՞ս է այն դրսևորվել՝ ու՞մ կողմից, ո՞ր հարթակներում:
3. Որպես բնապահպան ակտիվիստ հաճա՞խ են Ձեր գործընկերները թիրախավորվել: Եթե այո, ինչպես է այն դրսևորվել՝ ու՞մ կողմից, ո՞ր հարթակներում:
4. Ձեր կարծիքով ի՞նչ նպատակ են ունեցել դրանք տարածողները:
5. Որպես կանոն՝ Ձեր մասին բացասական նյութերում ի՞նչ կերպ են նշվում Ձեր տվյալները՝ անուն-ազգանուն, թե՞ վիրավորական բառեր:
6. Ինչպե՞ս են ազդել այդ հրապարակումները Ձեր հետագա գործունեության վրա. որոշել եք ավելի զուսպ լինել, ավելի քիչ հանրային լինել, խուսափել հարցազրույցներից, թե՞ շարունակել գործունեությունը:
7. Եթե որոշել եք շարունակել գործունեությունը, ի՞նչն է օգնել դիմակայել դրանց, ի՞նչ խորհուրդ կտաք մյուս բնապահպան կանանց, որոնք հնարավոր է՝ հայտնվեն համանման վիճակում:
8. Արդյո՞ք փոխվել են ապատեղեկատվական, զրպարտիչ հոսքերի բնույթը ժամանակի ընթացքում:
9. Խնդրում եմ նշել փորձագետների, լրագրողների, ակտիվիստների անուններ, որոնց հետ կարող եմ զրուցել այս թեմայով::
10. Ունե՞ք ավելացնելու բան, որի մասին չխոսեցինք:

Հավելված **2**

Փորձագիտական հարցազրույցի հարցաշար

1. Խնդրում եմ պատմել ձեր բնապահպանական գործունեության մասին. երբվանի՞ց եք այս ոլորտում, ո՞ր ակցիաներին եք մասնակցել, եթե հնարավոր է՝ նշեք հստակ ժամանակահատվածներով:
2. Ձեր դիտարկմամբ՝ հաճա՞խ են կին բնապահպանները թիրախավորվում: Եթե այո, ինչպե՞ս է այն դրսևորվել՝ ու՞մ կողմից, ո՞ր հարթակներում:
3. Ձեր կարծիքով՝ ի՞նչ նպատակ են ունեցել դրանք տարածողները:
4. Որպես կանոն՝ կին բնապահպանների մասին բացասական նյութերում ի՞նչ կերպ են նշվում նրանց տվյալները՝ անուն-ազգանուն, թե՞ վիրավորական բառեր:
5. Ձեր դիտարկմամբ՝ ինչպե՞ս են ազդել այդ հրապարակումները նրանց հետագա գործունեության վրա:
6. Ձեր կարծիքով՝ ինչն է նրանց օգնել դիմակայել դրանց:
7. Արդյո՞ք փոխվել է ապատեղեկատվական, զրպարտիչ հոսքերի բնույթը ժամանակի ընթացքում:
8. Խնդրում եմ նշել փորձագետների, լրագրողների, ակտիվիստների անուններ, որոնց հետ կարող եմ զրուցել այս թեմայով:
9. Ունե՞ք ավելացնելու բան, որի մասին չխոսեցինք:

Հավելված **3**

Առցանց հարցման հարցաշար

1. Արդյո՞ք հետաքրքրված եք Հայաստանում բնապահպանական հարցերով:
   - Այո
   - Ոչ
   - Դժվարանում եմ պատասխանել
2. Երբևէ մասնակցե՞լ եք որևէ բնապահպանական ակցիայի:
   - Այո
   - Ոչ
   - Դժվարանում եմ պատասխանել
3. Ձեր կարծիքով՝ ովքեր են Հայաստանում ամենաակտիվ բնապահպանները: Նշել նրանց անունները կամ տրամադրել էջերի հղումներ:
4. Ի՞նչ գիտեք Ձեր նշած անձանց մասին:
5. Ի՞նչ լուրեր եք լսել/կարդացել կին բնապահպանների մասին: Խնդրում եմ հակիրճ նկարագրել լուրը կամ տրամադրել հղում, սքրինշոթ:
6. Ո՞ր հարթակներից եք իմանում կին բնապահպանների մասին լուրերը: Նշել սոցիալական մեդիայի անունը կամ լրատվամիջոցի անունը:
7. Ո՞ր աղբյուրներից եք օգտվում տեղեկատվություն ստանալու համար: Նշել սոցիալական մեդիայի անունը կամ լրատվամիջոցի անունը:
8. Նշեք ձեր տարիքը:
   - Մինչև 18
   - 18-24
   - 25-34
   - 35-44
   - 45-54
   - 55-64
   - 65+
9. Նշեք ձեր սեռը:
   - Արական
   - Իգական
   - Նախընտրում եմ չպատասխանել
10. Նշեք ձեր բնակավայրը:
    - Երևան
    - Մարզային քաղաք
    - Գյուղական բնակավայր
    - Հայաստանից դուրս
11. Ո՞ր մարզում եք բնակվում:
    - Երևան
    - Շիրակ
    - Լոռի
    - Տավուշ
    - Կոտայք
    - Արագածոտն
    - Գեղարքունիք

- Արարատ
- Արմավիր
- Վայոց Ձոր
- Սյունիք
- Հայաստանից դուրս

12. Եթե ցանկանում եք ստանալ հետազոտության արդյունքները, խնդրում եմ տրամադրել էլեկտրոնային փոստի հասցե: